

891.99.09

2-16

8(092)
6-16

ՅԵ. ՇԱՀԱԳԻԶ

ԳԱՐԻԻԵԼ ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆՑ

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

1224

3615

Յ. Բ Տ Ս. Տ Ի Պ

ՀԱՅԱՍՏԱՆԻ Ս. Խ. ՇԱՀԱԳԻՍՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՅԵԿ. ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ՏԵԴԵԿԱԳՐԻ № 2-ԻՑ



ԳԱՐՐԻԵԼ ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆՑ

(Ծննդյան հարյուրամյակի առթիվ)

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

1925 թ. հունիսի 29-ին լրացավ մեր հայտնի թատերագիր Գարրիել Սունդուկյանի ծննդյան հարյուրամյակը:

Ի նկատի առնելով այն, զոր մեր գրականագետների մեջ կարող են գտնվել այնպիսիները, զորոնք կբազմանան, գուցե, այդ առթիվ գրել քանքարավոր թատերագրի լիակատար կենսագրությունը նրա թողած յերկրի մանրամասն գնահատականով, զոր մինչև ցայսօր տակավին կատարված չէ, մենք ավելորդ չենք համարում այստեղ հանդես բերել նրան վերաբերյալ փաստական ավյալներ Պետական Թանգարանում պահված վավերականների հիմունքով, զորով կարծում ենք, մի կողմից ծանոթացրած կլինենք մեր ընթերցողների լայն խավերը հանգուցյալի թեև համառոտ, բայց ստույգ կենսագրության, մյուս կողմից ել դյուրություն ընծայած կլինենք նրա մասին ընդարձակ ուսումնասիրություններ պատրաստողներին:

Գարրիել Սունդուկյանցը, զոր յուր աշակերտության որերով յուր ազգանունը գրել է և «Սանդուկյանց» և «Սունդուկով», ծնվել է Թիֆլիսի Անչիս-Պաթի տաճարի թաղում, զորտեղ վրաց արքաներն եյին նստում և վորտեղ կառուցված եյին նրանց պալատները: Նա ծնվել է 1825 թվի հունիսի 29-ին և մկրտվել է Ս. Նշան յեկեղեցում Տեր-Ստեփանոս քահանայի ձեռքով վրացի Դավիթ Սուլթանովի կնքահայրությամբ:

Ծննդյան վկայականի մեջ նրա ծննդյան ամիսն ու ամսաթիվը նշանակված է ոգոստոսի 1-ը, զոր սակայն ուզիդ չէ. թանգարանում նրա գրքերի մեջ պահված է Մխիթարյանների 25 թվի որացույցը, զորի մեջ հանգուցյալի ձեռքով ընդգծված է հունիսի 29-ը թիվը և տակը լուսանցքի վրա ծանոթարանված. «Իմ ծննդյան օրը», զորով յեվ հաստատվում է, զոր նա ծնվել է վոչ թե ոգոստոսի 1-ին, այլ հունիսի 29-ին:

Նրա հոր անունը յեղել է Մկրտում, զոր սերած է յեղել Թիֆլիզի «մոքուլաքական» ընտանիքից, զոր շատ հին հայ մոքուլաքների հետ միասին բնակելիս և յեղել Անչիս-Պաթի թաղում, մոքուլաքների, զորոնց շատավեղներին են յեղել Զիմզիմովները, զորոնց հավաքական տիպարները նա

ՍՅՈՒԳՎԱԾ Է
1952 թ.

ՀԱՅԳՈՂԻԳՐԱՅԻ ԶՐԴ ՏՊԱՐ.
ՊԱՏՎԵՐ № 4059.
ԳՐԱՌ. № 139 (բ) ՏԻՐԱԺ 50.

1603 6
БИБЛИОТЕКА
Им. Г. А. Давидовича

դուրս ե բերել յուր պիլիսոներում ի զեմս յուր Պեպոյ-ի «Արութին Զիմզի-մովի»:

Սոււնդուկյանցը յերկու անգամ ծննդյան վկայական ե ստացել. առաջին անգամ նրան վկայական ե տրվել 1846 թվին հունիսի 3-ին, յերկրորդ անգամ — 1852 թ. դեկտեմբերի 12-ին: Առաջինի մեջ նրա հոր անունը թարգմանված ե յեղել ուսերեն «Мертумов сын Сундукков»: Նա այդպիսի թարգմանութիւնը համարել ե անկանոն ե 1852 թ. խնդրամատուց ե յեղել հոստոսորին աալու իրեն նոր վկայական, վորի մեջ իր հոր անունը թարգմանված լինի այսպես. «что он сын Никиты Сундукянина, Тифлисского гражданина», վոր յեվ կատարել ե հոստոսորը:

1840 թվի մայիսի 3-ին նա ստացել ե Վրաստանի բժշկական վարչութիւնից ծաղկի պատվաստի վկայական, վորի մեջ ասված ե, վոր նա պատվաստված ե ու պատվաստը ունեցել ե հարկավոր ներգործութիւնը ե վոր Սոււնդուկյանցը առողջ կազմվածքի տեր ե:

Սոււնդուկյանցի մոր անունը հիշված ե Թինաթինա (Ռոսինյանց), վոր, ինչպես յերեվում ե, նրա իսկական անունը չի յեղել. նրա մոր իսկական անունը յեղել ե Թեկղի: Հանգուցյալի թղթերի մեջ պահված ե մի դարդարուն տետրակ, վորի մեջ յուր Սոււնդուկյանցի ձեռքով գրված ե մի անարվեստ, անպաճուճ մանկական-աշակերտական գրարաւ վտտանավոր, նվիրված մորը. գրա մեջ նա կոչված ե «Մնամակալ ու բարետիրտ տիկին Թեկղի»:

Նրա մայրը յեղել ե նրա ե նրա յեղբոր ու քրոջ համար խնամակալ ու բարերար, վորովհետեւ նրանք վաղ գրկվել են հորից ե սնվել ու մեծացել մոր խնամքի տակ: Ավելորդ չենք համարում այստեղ մեջ բերել այդ վտտանավորը, վոր կրում ե «Յարգանք տարեմտական առ պատուելի մայրն մեր» խորագիրը ե գրված ե նոր տարու աթիւլ 1838 թ., այսինքն, Սոււնդուկյանցի 13 տարեկան հասակում, ե արտահայտում ե նրա այն բուսն մանկական սերը, վոր նա այդ վաղ ժամանակներում զեռ տածել ե իր մոր հանդեպ: Այդ վտտանավորը, վոր նա նույն տետրակում թարգմանել ե ե Ֆրանսերեն — «Compliment du jour de l'an 1838» խորագրով, նույն ժամանակ նրա 1837 թ. գրած դույն որինակ ու դույն բովանդակութիւնով մյուս վտտանավորի հետ միասին ե նրա առաջին գրվածքն ե: —

Ըզմուռ շրջանի սոյն նորոգ տարւոյ,
Շնորհաւորեմք մօրդ մեր սիրելւոյ,
Ես ե եզրայր իմ ե փոքրիկ մեր քոյր
Աս Տիրուհիդ մեր մատչիմք ի համբոյր:
Սնամակալ մեր՝ դու Թեկղի տիկին,
Ով ծնող անձանցս՝ սնուցիչ անդին,
Ընկալ ըզնուէր մերոյ սերտ սրբաի
Սոստանամք լինել քեզ հլու որդի,
Յանկալով կենացդ մերոյ կենսատուի,
Կատարելով զկամս մօրդ բարերարի:

Վոր Սոււնդուկյանցը վաղ ե գրկվել հորից, այդ յերեվում ե նրա հոր

Հարութիւնի վորդի Մկրտումի վտտանավոր տապանագրից, վորի որինակը պահպանվել ե նրա թղթերի մեջ:

«Յամի Տեառն 1831 ՚ի Մայիսի 22.
՚ի սոյն դամբարան ամփոփեալ գրնի
Մարմին բարեպաշտըն Մկրտումի,
Որդոյ Յարութեան Սանդուկեանց ձայնեալ,
՚ի Տփլիսեաց աստի վաճառականի:
Սորա ոչ երկարեալ զիւր կեանս աշխարհի,
Մանգաղաւ մահու տարաժամ հընձի
՚ի քառասներորդ ե իններորդում.
Ամի ե կենաց իւրում հասակի,
Թողլով որբս յերկրի՝ զմատաղատի,
Զերիս զիւր զաւակս ե զիւր այրի,
Սնդէ արդ յորոց աստէն հանգիպին
Յիշել զինքն ՚ի աէր՝ ասել ողորմի»:

Նա, ուրեմն, յուր հորից հետո վորր ե մնացել յուր վեց տարեկան հասակում ե մայրն ե յեղել, վոր հոգացել ե նրա կրթութիւնն մասին, շխընայելով գրա համար ե վոչ մի բան ե տալով նրան ժամանակի ամենափայլուն դաստիարակութիւնն ու կրթութիւնը:

Յուր սկզբնական կրթութիւնը նա ստացել ե իրանց տանը ապրող հայտնի Յեղեսացի Հակոբ Շահան-Ջրպետից ե նրա Պարիզեցի Ֆրանսուհի կնոջից, վորոնց մոտ նա սովորել ե 1832 ապր. 1-ը — 1838 թ. սեպտ. 1-ը, մինչև Ջրպետի մահը, ամեն որ հաճախելով նրանց բնակարանը ե մնալով առավոտ ժամը 8-ից մինչև յերեկոյան վեցը: Նրա թղթերի մեջ պահպանվել ե Ջրպետի տապանագրի Ֆրանսերեն որինակը յեվ գրա հայերեն թարգմանութիւնը, վորից յերեվում ե, վոր նրա առաջին վարժապետի մահը պատահել ե 1838 թ. ոգոստոսի 16-ին. յերբ սա յոթնասուն տարեկան ծերունի յե յեղել: Յեթե ի նկատի առնենք, վոր նա սկսել ե սովորել յուր վեց տարեկան հասակում, կրպարգլի ուրեմն, վոր նրա կրթութիւնն ու դաստիարակութիւնը Շահան Ջրպետի մոտ տեղել ե վեց տարի շարունակ ե տվել ե շատ հաջող արդիւնք, կապելով աշակերտին յուր դաստիարակների հետ սիրտ յեվ յերախտագիտութիւնն զգացմունքով: Բացի հիշյալ տապանագրից, Սոււնդուկյանցի թղթերի մեջ պահպանվել ե Շահան Ջրպետից նրա ձեռքով գրված ե մի ձեռագիր տետրակ «Յերկրաչափութիւնն» խորագրով, վորի վրա, ինչպես յերևում ե, նա դաս ե առել Ջրպետից ե նրա մահից հետո յել նա պահել ե յուր թղթերի մեջ իրեն հիշատակ: Յերկրաչափութիւնը, ինչպես յերևում ե, նրա սիրած առարկան ե յեղել: Հայտնի յե, վոր նա մի կարճ ժամանակ ձրի վարժապետութիւնն ե արել ներսխոյան Դպրանոցում, դասավանդելով այդ առարկան բարձր դասարանի աշակերտներին:

Այստեղ ավելորդ չենք համարում մեջ բերել Ջրպետի Ֆրանսերեն տապանագիրը, վորի հայերեն թարգմանութիւնն ել յուր, Սոււնդուկյանցի, ձեռքով ե կատարված ե պահված գործյալ ի հիշատակ —

«Ci-git Jacques Chahan de Cirbied professeur d'arménien à l'école Royale et spéciale des langues orientales de France et membre de plusieurs accadémies né à Edessa décédé à Tiflis le 16 août 1838 âgé de 70 ans monument posé par son épouse eplorée» —

«Աստ ամփոփեցաւ մարմինն Յակոբայ Շահան Զրպետեանի յեղեսացոյ, դասատուի Հայկաբանութեան և Արեւելեան լեզուաց յարքունի և ի մասնաւոր զպրոցս Գաղղիոյ և անդամոյ բազում ուսումնական ճամարտակաց. որ յանդեաւ ի Տփլիսի 16 օգոստոսի 1838 ամի 70 ամեաց հասակի կենաց: Տապանս այս կանգնեցաւ յողբալի կնոջէ անսն ախորիկ»:

Հայերեն լեզուն և, շատ ուշ, լատիներենն ու իտալերենը նա սովորել և Զրպետից, ուսուցիչը Ա. Արարատյանից և հայ կաթողիկ Մամուլովից, իսկ ֆրանսերենը նրա կնոջից — Մարգարիտ Վոնլատուսից (Marguerite Wollatum), վոր մի գտար յուն ֆրանսուէի յե յեղել, ծնված Դենիզում, բայց սնված ու մեծացած Պարիզում:

Սունդուկյանցը Պարիզի Արեւելյան լեզուների զպրոցի ուսուցչապետ Ֆրեդերիկ Մակլերին (Frédéric Macler) 1909 թ. հոկտեմբերին յոր մասին ուղարկած կենսագրական ծանոթյունների մեջ, ի միջի ալլոց, հիշում և և այն, թե ինքը ինչպես և սովորել ֆրանսերեն:

«Յես մինչև ցայսօր ել զեռլով հիշում եմ այն բողենները», գրում և նա այդ ծանոթությունների մեջ, «յերբ նստած նրա (ուսուցչուհու) աջ կողմը, վանկ կապելով կարգում էյի՝ «b-l-a—bla»: Նա այնքան պատմել եր ինձ Պարիզի մասին, վոր յես, յերբ 1878 թ. պատեն ժամանակ գտա լինել Պարիզի մասին, վոր յես շատ ծանոթություն ունիմ այն բոլոր տեղերի մասին, վոր առաջին անգամն էյի տեսնում: Բայց այնու ամենայնիվ յես հիացա այդ ախիղերական քաղաքի բարեմասնություններով և հոյակապությամբ:

Նույն իսկ որը, յերբ ժամանեցի Պարիզ, յես բարձրացա Հաղթանակի կամարը (l'arc de triomphe) և Վանդոմի սյունը (la colonne de Vendome), և այդտեղից մեկնելուս որը յես մնաս բարե սասցի Պարիզին, յեյնելով Ս. Հակոբա աշտարակը (la tour St-Jacques): Ինչպես բազմավոր պիտի համարեն իրանց ֆրանսիացիք, վոր Պարիզը պատկանում և իրանց, վոր նրանք կարող են պարծենալ իրանց քաղաքակրթությամբ:

Յես յերբեք չեմ մոռանալ այն բողենները. յերբ յես 1878 թ. ներկա գտնվեցա Պարիզի ֆրանսիական թատրոնում Fourchambault-ի 54-րդ ներկայացմանը, վորտեղ խաղում էյին Տիկին Ագարը, Պ. Կոքլենը և մյուսները»...

Զրպետի մահից հետո նա յոր կրթությունը շարունակել և Արգանյան յեղբայրների պանսիոնում — «Благородный пансион кандидатов Арзановых»: Արգանյանները ավարտած լինելով իրենց ուսման ընթացքը Լազարյան ճեմարանում, իրենց պանսիոնն ել կազմակերպել էյին ճեմարանի որինակով ու կարգերով: Այդտեղ մյուս առարկաների շարքում գասավանդվում էյին և լատին ու ֆրանսերեն լեզուները:

Իբրև հիշատակ նրա Արգանյանների պանսիոնում սովորած լինելուն, պահպանվել և նրա թղթերի մեջ նրա այդ ժամանակվա աշակերտական տետրակներից մեկը Արգանյան յեղբայրներից մեկի մակագրությամբ և նրան պանսիոնից արված վկայականը «Attestat», վորից յերևում և, վոր նա մտել և պանսիոն 1838 թվին, այսինքն Զրպետի մահից հետո, և ավարտել և այդտեղ յուր ուսման ընթացքը 1840 թ. հունվարին, յոր 15 տարեկան հասակում, և որինակելի վարքի տեր և յեղել:

Դույն 1840 թվին նա մտել և գիմնազիոն, վորտեղ նա սովորել և մինչեվ 1846 թվիլը, յերբ նա հաջողությամբ ավարտել և յուր միջնակարգ ուսման ընթացքը: Պահպանվել են և նրա գիմնազիոնական աշակերտական տետրակները, և 1845 թվի նոյեմբերի 4-ին նրան արված գովասանական թերթը, վորի մեջ ասված և, վոր թերթը արված և թիֆլիզի գիմնազիոնի վեցերորդ գասարանի աշակերտ Պարթիել Սունդուկյանցին: Ասել և թե նա այդտեղ գիմնազիոնումն ել, ինչպես Զրպետի մտա և Արգանյանների պանսիոնում, սովորել և գովանի վարքով ու հառաջադիմությամբ:

1846 թվի ողոստոսին նա գնացել և Պետերբուրգ ու նույն ամսի 20-ին մտել և կայսերական համալսարանը ու գրվել ուսանող կեզվարանական բաժնի Արեւելյան ճյուղի, վորի լիակատար գասընթացքը նա ավարտել և 1850 թ. յուր 25 տարեկան հասակում, ստանալով արեւելյան լեզուների կանդիդատի գիտական աստիճան (Տես գրալում 1850 նոյեմբերի 23):

Ավարտելուց հետո, նա վերադարձել և թիֆլիզ ու հաջորդ 1851 թ. փետրվարի 24-ին մտել և ծառայության փոխարքայի գիվանատունը բանավոր թարգմանի պաշտոնով ու նույն թվին կարգվել և բաժնի վարչի ոգնական — «Помощник столоначальника»: Յերեք տարուց հետո, 1853 թ. դեկտեմբերին, նա փոխարքայի հրամանով գասվել և Դերբենաի գինվորական նահանգապետի գիվանատան աստիճանավորների շարքը և ստիպված և յեղել մեկնել Դերբենա, իսկ հաջորդ 1854 թվին կարգվել և նույն գիվանատան գործավար (Տես Յուցակ ծառայության 1858 թ. հունվարի 25):

Նրա Դերբենա փոխարքայիլը յեղել և վոչ յուր կամքով, այլ իշխանության հրամանով, իբրև պատիժ: Նրա թղթերի մեջ պահված և յերկու խնդրագիր — մեկը յուր անունից, մյուսը՝ մոր, այրի թինաթինայի, վորոնցից պարզվում և, վոր նրա ծառայության յերրորդ տարին, 1853 թ. հունիսին, տեղի յե ունեցել նրա և գիվանատան գանձապահ Բելլայի վի մեջ ընդհարում: Գանձապահը անվայել և ծանր խոսքերով անպատվել և նրան և նա ել փոխարքարձարար պատասխանել և, վորի համար և գանձապահը պահանջել և գիվանատան վերատեսուչ Շչերբինից, վոր Սունդուկյանցը հրատարակորեն ներումն ինգրի իրանից: Սակայն վերատեսուչը ի նկատի առնելով կատարված ընդհարման հանգամանքները, բավականացել և նրան գիվանատան մեջ անային կալանքի յենթարկելու պատժով:

Այդ պատիժը սակայն չի բավարարում գանձապահին. նա այնպես և անում, վոր յոթ ամսից հետո, նույն թվի դեկտեմբերին, Սունդուկյանցը ստիպված և լինում բարձր իշխանության հրամանով փոխարքայի 24 ժամ-

վա ընթացքում Դերբենա գինվորական հասանգապետի գիվանատունը, իր-
րև հանդուգն և վատ վարքի տեր անձն. թեև զբանից առաջ նա քանիցս
նույն իշխանության կողմից վկայվել ու վորակվել էր, իրրև որինակելի
վարքի տեր աստիճանավար:

Այսպիսով նա միևնույն հանցանքի համար յենթարկվում և պատժի
յերկու անգամ, առաջին անգամ՝ կալանքի, յերկրորդ անգամ պաշտոնազր-
կության և աքսորի Ադապալում, թեև ներվում և նրան այդ հանցանքը,
բայց այնուամենայնիվ չի իմացվում, թե ինչպես, ինչ միջոցներով ևր
զանձապահ Բելլայեվը հասել յուր փառասիրության այգպիսի յեղանակով
հազուրդ տալու նպատակին:

Թինաթինա Սունդուկյանցի խնդրագրից պարզվում է մեզ համար և
մի ուրիշ կարևոր հանգամանք, — վոր նա, Թինաթինան, հայերեն գրել կար-
դալ չի իմացել, և խնդրագիրը, վոր գրվել ու մատուցվել է փոխարքա Բա-
րյատինսկուն 1856 թվի դեկտեմբերին, ստորագրել և վրացերեն:

Ասել է՝ թե Սունդուկյանցն ևլ յուր մանկության որերում հավանո-
րեն վրացերեն և թոթովել ու հայերենը հետո յե սովորել:

Դերբենայից նա 1858-ին փոխադրվել է Թիֆլիզ, պաշտոն և ստանձ-
նել ճանապարհների Հաղորդակության վարչության մեջ և 50 տարի շա-
րունակ ծառայելուց հետո, 1897 թվի փետրվարի 9-ին հրաժարական և
տվել և արձակվել պաշտոնից, հասնելով բարձր աստիճանի և ստանալով
2500 ո. կենսաթոշակ: Ծառայության ցուցակից յերևում է, վոր նա յուր
բազմամյա ծառայության ընթացքում կատարել է բազմաթիվ, յերբեմն
շատ կնճուտ և դժվարին, հանձնարարություններ և ամեն անգամ ևլ հա-
ջողությամբ ու բարեխղճությամբ ու խոհեմությամբ, վորի հետևանքով և
շահել և իր իշխանավորների հաճությունը և ծառայակիցների սերն ու
համակրանքը:

Պետերբուրգում յուր ուսանողության որերում չորս տարվա ընթաց-
քում (1846—1850), նա, հաճախելով ռուսաց և ֆրանսիական թատրոնները, և
ավելի հաճախ վերջինը, տեսնելով ռուս նշանավոր դերասաններ Կարատի-
զինին, Մարտինովին և Մաչալովին, նույնպես Տիկին Արնոլդ Պիտսին,
Ալագին, Բերտոնին և ֆրանսիական թատրոնի մյուս նշանավոր դերասան-
ներին, սեր և կապել թատրոնին, և Մոլյերը, Շեքսպիրը, Շիլլերը, վորոնց
զրվածքները նա կարգացել և ֆրանսերեն լեզվով, դարձել են նրա ընթեր-
ցանության սիրելի հեղինակները:

Թատերական զրվածքների սերը, յուր ասելով, նրա սրտում յեղել և
և առաջ, յերբ նա դեռ 17—18 տարեկան և յեղել և սովորելիս գիմնազիոնում:
Այդ ժամանակները մի անգամ նրա ձեռքն և ընկել Շիլլերի «Սեր և Նեն-
գություն» պիեսի ռուսերեն թագմանությունը: Դա այնպես դուր և յեկել
նրան և այնպիսի գորեզ տպավորություն արել նրա վրա, վոր թեև յերեկո
յե յեղել և ուշ, և մայրն ևլ թագանձանքով ստիպելիս և յեղել նրան քնել,
բայց նա չի կարողացել զիրքը ձեռքից թողնել, մինչև վոր արտասովորով
վերջացրել և:

Չափազանց ուրախացել և նա, յերբ Պետերբուրգում 1846 թվին առա-
ջին անգամ տեսել և Կարատիզինին ֆերդինանդի դերում. նա այդ որվա-

նից սիրել և թատրոնը և բաց չի թողեչ և վոչ մի աչքի ընկնող ներկայա-
ցում Ալեքսանդրյան թատրոնում: Շչիպլիկինը Ֆամուսովի դերում միշտ նրա
աչքի առաջ և յեղել և հիսուն տարի անցնելուց հետո յել նրան այնպես
և թվել, թե դեռ լսում և նրա ձայնը:

Թիֆլիզում, յուր ծառայության գործերը կարգավորելուց հետո, նա
ինքն ևլ ձեռնարկում և գրել պիեսներ, նյութ առնելով Թիֆլիզի կյանքից,
վոր նա մանկությունից այնքան կատարելությամբ ուսումնասիրել էր,
գրելով Թիֆլիզի բարբառով, վոր նրա հոգուն այնքան ընտել էր և նման-
վելով ռուս հայանի կենցաղագետ—թատերագիր Ա. Ն. Ստարովսկուն, վորի
հետ նա անձամբ ծանոթ և յեղել:

Նրա առաջին պիեսը յեղել և «Կիշերվա Սարըր խեր և», վոր առաջին
անգամ ներկայացվել և Թիֆլիսում 1863 թվի հոկտեմբերի 23-ին. յեր-
կրորդ պիեսը, վոր նա գրել և, յեղել և «Սաթարալա»-ն, վոր առաջին
անգամ ներկայացվել և 1866 թվի ապրիլին, վորի հաջողության շատ
նպատակ և յուր փայլուն խաղով ժամանակի նշանավոր հայ դերասան
Միհրզաթ Ամերիկյանը, վորի հետ այն որվանից Սունդուկյանցը կապվել
և բարեկամական շերտ սիրով: Պահպանվել և մի յերկու նամակ, վոր փո-
խանակվել և նրանց մեջ Ամերիկյանի Պոլիս մեկնելուց հետո 1873 թ.,
վորոնց ամեն մի տողից յերևում և նրանց մտերմությունը և ընկերական
մտ հարաբերությունը:

Դրանց, այդ յերկու պիեսների, հաջողությունը խրախուսել և նրան
և պատճառ և դարձել նրան նվիրվելու թատրոնին և աշխատելու նրա հա-
մար:

«Սաթարալայից» հետոնա գրել և «Ոսկան Պետրովիչը ևն-կինքումը»
«Յեզ ալն կամ Նոր Դիոկենես», «Ելի մեկ զոհ» և, վերջապես, «Պեպո»-ն:
Յուր գլուխ գործոց — «Պեպո»-ն նա գրել և 1870 թվի սկզբներին, և
րեմ հանել հաջորդ 1871 թվի ապրիլի 30-ին, վորով նա առաջնակարգ թա-
տերագրի համբավ և հանել և հոչակ ստացել վոչ միայն Հայերի մեջ, այլ
և բոլոր Կովկասաբնակ ազգերի մեջ: Պեպոն թարգմանվել և ռուս և այլ լե-
զուներով և հայ բարբառներով, հատկապես վրացերեն լեզվով: Վրացիք
շատ են սիրել Պեպոն և իրենց բեպերտուարի մեջ միշտ առաջնակարգ
տեղ հատկացրել նրան:

Սունդուկյանցը քաջ գիտեր վրաց լեզուն ու այնքան ևլ ընտել էր
վրաց կյանքին, վորքան վոր հայոց. նա մեծացել էր վրաց մեջ և իր խո-
սելու ու մտածելու առանձնահատկությամբ շատ չեր տարբերվում վրացի
մտավորականներից, ուստի և վրաց գրական շրջաններում համարվում էր
վոչ ոտար այլ հարազատ: Հանգուցյալի թղթերի մեջ պահպանվել և Պե-
պոյի և ֆրանսերեն թարգմանության ձեռագիրը:

Պեպոյի պահպանված ամենահին ու սկզբնական ձեռագրից յերևում և,
վոր նա մի ձեռքով զրված չե, այլ մի քանի: Հայանի յե, վոր դա գրվել
և Թիֆլիզի շրջակա ամարանոցներից մեկում — Կրճանխում: Սունդուկյանցը
այդ մասամբ ինքն և գրել, մասամբ ևլ թելադրել և Գեվորգ Չմշկյանին,
Չաքարիա Բարանասյանցին և Միհրզաթ Ամերիկյանին: Հետագայում նա
թեև զբա մեջ հետզհետե ու շարունակ փոփոխություններ և մտցրել, բայց

յուր հիմնական կառուցվածքով նա մնացել և այնպես, ինչպես մի անգամ գրվել ու թելադրվել է: Փոփոխությունները տերապես յեղել են լեզվական և մոճական և այս կամ այն վոչ այնքան էլ ետևան հավելումներով ու հապավումներով:

Պեպոյի սկզբնագիրը ամբողջ թերթերից բաղկացած և կազմված մի տետրակ է, վորի ամեն մի թերթը յերկու հավասար մասի յե բաժանված: Բնագիրը գրված և յերկրորդ կիսի վրա, իսկ առաջինի վրա միայն հավելումներն ու ուղղումները: Դույն առաջին կիսի վրա, բաց տեղերում, գրված են և զանազան հետաքրքրական ծանոթություններ, ինչպես, որինակ, առաջին յերեսի վրա—«Նվիրվում ե իմ սիրելի Գեպոյի Չմշկյանին. Գ. Սուսուկյանց»: Եջ 17—«Մինչև յերկրորդ արարածը կըսկսեյի, յես համոզված եյի, վոր բարթը պետք է Պեպոյի տանը լուս ընկնի»: Եջ 29—«Եփեմիայի նման մեկը, վոր իր վրա եր ասել այս գրվածքը, շատ նեղացած զանգատվի եր, թե «վեր ուրն իմ ես կինտոյիմեն իմքին ասել, վոր ինձ վրա ես հանգի բան ին մոգոնի»: Գ. Ս. 25 նոյեմբերի 1902 թ.: Եջ 49—«Այս թերթից մինչև վերջը մեկ գիշերումս իմ թելադրել կըծանխում»: Եջ 57—«Այս վերջը հետո յեմ գրել քաղաքում»: Եջ 58—«Չմշկյանը վրա հասավ ու գրիչս ավի նրան»: Եջ 60—«Կըծանխա, 1870, Ոգոստոսի 3-ին»: Վերջին թերթի բաց յերեսին, վորտեղ զանազան նկարներ ու զծեր են քաշված, իբրև աննպատակ գրչախաղ, գրված և «Չմշկյանի հունարը: Քանի վոր լեզուս դեմ եր նընգնում, նա ետուենք եր խըթըրժաում: Գ. Ս.»:

Պահպանվել և Պեպոյի առաջին ներկայացման շքեղ աֆիշը, մետաքսի վրա սպազրված, վորից յերևում է, վոր ներկայացումը տեղի յե ունեցել Թիֆլիզի քաղաքային թատրոնում, 71 թվին, ուրբաթ, ապրիլի 30-ին: Ներկայացման մասնակցել են առաջին անգամ Չմշկյանի խնդիրքով իր ազգական որ. Թագուհին և Ամերիկյանի խնդիրքով իր քույրը՝ Կեկին Անայիսը:

Թիֆլիսի հայ գերատանական խմբի մեջ գերերը բաժանված են յեղել հետևյալ կերպով՝

Արուսի . . .	Պ. Ամերիկյան	Գիքո . . .	Պ. Միրադյանց
Եփեմիա . . .	Տ. Անայիս	Կակուլի . . .	Պ. Արամյանց
Պեպո . . .	Պ. Չմշկյան	Գիգուլի . . .	Պ. Մանգակունի
Շուշան . . .	Տ. Արամյանց	Սամսոն . . .	Պ. Տ. Ասատուրյան
Կեկիլ . . .	Որ. Թագուհի		

Հետագայում ամենալավ գերակատարներ Պեպոյի գլխավոր դերերի մեջ հանդիսացել են—Գեորգ Չմշկյանը՝ Պեպոյի գերում, Գեորգ Տեր Դավթյանը՝ Գիքոյի գերում, Ամիրան Մանդինյանը՝ Կակուլիի գերում և Սաթիկ Չմշկյանը՝ Եփեմիայի գերում, վորոնք մասնակցել են և Սուսուկյանցի գրական գործունեության քաննիչնգամայակին կազմակերպված հանդիսավոր ներկայացման 1888 թվի ապրիլի 30-ին և այդ առթիվ ուղարկել են հեղինակին իրենց լուսանկար պատկերները, հանված իրենց դերերի վորոշ տեղերում, հետևյալ բնորոշ ընծայականներով—«Պեպոն յուր հեղինակին—Գեորգ Չմշկյան»: «Անմահ Պեպոյի հեղինակին իր Կակուլի

Ամիրան Մանդինյանից», «Եփեմիան իր գերի հեղինակին», «Անմահ Գիքո-ի նախող Գարրիկ Սուսուկյանցին Գեորգ Տեր Դավթյանից»:

Պեպոյից հետո Սուսուկյանցը գրել և այլևս մի շարք պիեսներ—«Քանդած Ոջախ», «Ամուսիններ», «Բաղնիսի Բողջա», «Մեր ու Ազատություն» և այլն, բայց վոչ մեկի մեջ նրա ստեղծագործական քանքարը այլևս չի բարձրացել. չի հավասարվել նրա Պեպոյի մեջ արտահայտած տաղանթի բարձրության:

Բացի ուս հեղինակների—Գոգուլի, Գրիբոյեդովի, Ուստումյանի և մյուսների գրվածներից, վոր նրա մշտական կարգալու և ուսումնասիրելու առարկան են յեղել, նա, յուր ասելով, յուր «Գիշերվան Սարը խեր և» գրելուց հետո, կարգացել և Սկրիբի և Մոլյերի գրվածների ֆրանսիական բնագրերը և գրել և իր «Խաթաբալան», «Ոսկան Պետրովիչը են-կինքումը» և «Նոր Դիոգենեսը». հետո նա անձնատուր և յեղել Շիլլերի ֆրանսերեն թարգմանության ընթերցանության և գրել և յուր «Ելի մեկ զոհ»-ը և, վերջապես, նա կարգացել և Շեքսպիրի յերկերի ֆրանսերեն թարգմանությունները ու գրել և յուր «Պեպո»-ն ու «Քանդած Ոջախ»-ը:

«Խաթաբալայի» ու «Ելի մեկ զոհի» Մասիսյանցը և Միքայելը ինքը Սուսուկյանցն և, «Պեպոն» գարձյալ ինքը Սուսուկյանցն և, միայն հասարակ կինտոյի դիմակի տակ: Պեպոյի սուր, թունալից արտահայտությունները և խոսքերի մի խոշոր մասը, վոր նա ասել և Զիմզիմովին, մտացածին բաներ չեն, այլ իրոք ինքը Սուսուկյանցը ասել և իր հակառակորդին վկաների ներկայությամբ գեռ այն ժամանակ, յիրը տակավին «Պեպո»-ն գրված չի յեղել:

«Քանդած Ոջախ» Ոսեփը յուր Սուսուկյանցի ազգականներից մեկն և, իսկ Խաթաբալան նրա հանգուցյալ մայրը Թինաթինան. վոր յեղել և և նրա մյուս պիեսներում զուրս բերված գրական, բարի կանանց արարների որինակը:

Սուսուկյանցի գրական գործունեության մեջ ընդհանրապես նկատված և յերկու շրջան—առաջինը՝ նրա զարգացման շրջանն և, յիրը նրա տաղանտը, սկսած 1863 թվից, հեռզհետե զարգանալով, հասնում և յուր գագաթնակետին, 1870-ին արտագրելով նրա գլուխ գործոցը—«Պեպո»-ն. յերկրորդը՝ անկման շրջանը, յիրը նրա տաղանտը գնալով թուլանում և, նա այդ միջոցում 1890-ից, նախ, յերկար ժամանակ վոչինչ չի գրում ու հետո ել, յիրը սկսում և վերստին գրել, տալիս և համեմատաբար շատ թույլ գրվածքներ՝ «Մեր և Ազատություն», «Ամուսիններ» և «Բաղնիսի Բողջա», վորոնք վոչ միայն չեն կարող համեմատվել Պեպոյի հետ, այլ և շատ բանով հետ են մնում «Քանդած Ոջախից» և «Ելի մեկ զոհից»:

Նրա գրվածքների մեջ մի ուրույն տեղ և բռնում «Ամուսիններ» պիեսը, վոր նա գրել և գրական լեզվով և վորի մեջ նա շոշափել և ընդհանուր մտափններ, ու չի հաջողել, վորովհետե զրա մեջ նա զուրս և յեկել իրան ընտել Թիֆլիզի կյանքի ու կենցաղի առանձնահատուկ և սպեցիֆիք շրջանից և այդ կյանքի ու կենցաղի առանձնահատուկությունները բարբառի բնորոշ վոճերով ու դարձվածքներով յուրահատուկ վարպետությամբ արտահայտելու հնարավորությունից: Նրա տաղանտը յուր ցայտուն ար-

տանայտությունը գտել է միայն թիֆլիզի կյանքից նյութ վերցրած կեն-
ցազգաբանական գրվածքներում, և այն՝ թիֆլիզի նրա բերանում այնպես
ճկուն բարբառի գործածության պայմաններում:

Սունդուկյանցի բարեկամներից և նրա սաղանդը հարգողներից վո-
մանը նրան համեմատել են Մոլիերի հետ, գտնելով նրա ու ֆրանսիացի
թատերագրի մեջ նմանություն: Նրա թղթերի մեջ պահպանվել են Մոլիե-
րի յերկու մեծագիր ու փոքրագիր պատկերները, վորոնցից մեկի վրա մենք
կարդում ենք ֆրանսերեն — „Salut à Molière arménien Gabriel Soundoukiantz“,
մյուսի վրա ռուսերեն — „Армянскому Мольеру“ և բժշկուպետ Հովհաննես
Գասպարյանցի այցելատույնը, վորի վրա գրված է «Երկրորդ անգամ»,
«Վասն պատուական ընծայարարության խորհին շնորհակալութիւն Հայ-
կազնեսայ Մոլիերին Սունդուկեան: Միջնորդութեամբ Սանդրոի Ստեփան-
եան ի բժշկապետէ Հովհաննէս Գասպարեան. 28/IV 1911 օր հինդարթի»:

Այդ նկատողությունը, ի հարկէ ճիշտ է, բայց վոչ լիակատարորեն,
այլ մասամբ: Այդպիսի նմանություն, և մենք կասենք, հեռավոր, մասնա-
վոր նմանություն, կարելի չէ գտնել ու բոլոր կենցաղագիր թատերագրե-
րի մեջ: Մոլիերի Լավուրի, Տարտյուֆի, Յերեվակայական հիվանդի տի-
պարները և առաստարակ նրա ֆրանսիական կենցաղի պատկերացման յե-
ղանակը հաղիվ թե այնքան նման լինեն Սունդուկյանցի պատկերացման
յեղանակին ու դուրս բերած տիպարներին, վոր հնարավոր լիներ նրան
կոչել «Հայկական Մոլիեր»։ այլ բան և ուսու կենցաղագիր-թատերագիր
Ա. Ն. Սատրոփակին, վորին շատ կողմերով նմանում է մեր Սունդուկյանցը:

Այդ է պատճառը, վոր հայ քննադատները ու նրա յերկերին ծանոթ
ուսաները սովորաբար և հաճախ նմանեցրել են Սունդուկյանցին Ա. Ն.
Սատրոփակուն: Նորերս վախճանված ուսու հայտնի դերասանուհի Գլիկերիա
Ֆեդոտովան յուր հորեյլանի առթիվ Սունդուկյանից 1912 թվի հունվարին
ստացած շնորհավորական հեռագրին ի պատասխան ուղարկել է նրան յուր
պատկերը, վորի հետևը գրել է «Глубоко тронута лестным вниманием вели-
кого писателя, напоминающего мне нашего незабвенного Островского. Сер-
дечно благодарю за привет. Гликерия Федотова»:

Իսկ վոր Սունդուկյանցը նմանել է Սատրոփակուն իր գրության յե-
ղանակով, իր պիեսներում դուրս բերած տիպարների և նկարագրած կյան-
քի հանգամանքներով, այդ էլ շատ հասկանալի չէ: Յերկուան էլ կենցա-
ղագիր թատերագրեր են յեղել և իրենց գրվածքներում նկարագրել ու ներ-
կայացրել են վորոշ տեղի ու միջավայրի կյանքի պատկերը այդ տեղին ու
միջավայրին հատուկ պարագաներով ու զիմագծերով:

Ռուս թատերագիրը իր պիեսներում հատկապես դուրս է բերել հին
Մոսկվան, նրա „Замоскворечие“ կոչված քաղաքամասը, դուրս է բերել
նումը այդպեղ ապրող առևտրականների կյանքից վերցրած տիպարներ —
իրանց հատուկ ու այժմ մեզ համար միանգամայն խորթ առանձնահատ-
կություններով, վարք ու բարքով, սովորություններով: Սունդուկյանցը
հուշներ արել է թիֆլիզի վերաբերմամբ, ներկայացնելով հին թիֆլիզը յուր
առանձնահատուկ, նույնպես այժմ մեզ համար խորթ, կյանքով, մտածելա-

կերպով, աշխարհահայացքով: Այժմ չկան այդ կյանքը, այդ տիպարները,
վոր այնքան վառ գույներով արձանագրել և Սունդուկյանցի քանքարա-
վոր գրելը, ինչպես վոր չկան և հին Մոսկվան, „Замоскворечие“-ն, իրանց
կյանքով ու տիպարներով, վոր վոչ պակաս վառ գույներով դուրս է բերել
ու անմահացրել Սատրոփակին:

Մինչև իսկ լեզուն այն ժամանակները այդ միջավայրերում տիպիք,
յուրահատուկ է յեղել: Լեզուն ի հարկէ, ինչպես հին Մոսկվայում, նույն-
պես և հին թիֆլիզում, նույն ուսուց ու նույն հայոց բարբառներն են յե-
ղել, բայց առաջում նա տարբերվել է ընդհանուր գործածական ուսուց
լեզվից իր առանձնահատուկ վոճերի ու բառերի գործածությամբ, իսկ յերկ-
րորում՝ հին թիֆլիզին հատուկ վրացահայ բարբառի գործածությամբ:

Յեվ այդտեղ Սունդուկյանցի Սատրոփակուն գիտակցաբար նմանելու,
նրան ընդորինակելու խնդիր չի կարող լինել: Նա, անկասկած, կարգացել
եր նրա գրվածները և վորոշ չափով ազդվել նրանից, քանի վոր Սատրոփ-
ակին նրանից մեծ էր (ծնված 1823 թ.) տարիքով, և ինքն էլ դեռ չեր
սկսել գրել, յերբ արդեն դուրս էր յեկել ուսու թատերագրի առաջին յերկու
հատորից բաղկացած պիեսների ժողովածուն (1859 թ.): Բայց Սունդուկ-
յանը գրել է ինքնուրույնաբար, անկախորեն ստեղծագործելով, և միայն
նույնանման տիպիք կենցաղների պատկերացումը յերկուսի գրչի տակ էլ
ընականաբար առաջ է բերել պատկերացման նույն յեղանակը:

Սունդուկյանցը, ինչպես յերևում է, կարգացել, ուսումնասիրել է և Գրի-
րոյեզովի «Սեղից պատուհասը» և վորոշ չափով ազդվել է նրանից: Յուր
«Սաթարալայի» մեջ, վոր նա գրել է Հովհաննես Տեր-Գրիգորյանի (Վանո)
գրգումով, թիւղարկելով այն նրան կրճանիսում, կարելի չէ գտնել մինչև
իսկ նրանից փոխ առած մաքեր ու նախադասություններ: «Սեղից պա-
տուհասը» մեջ մի տեղ, որինակի համար, Ֆամուսովը ասում է «С тех пор
дороги, тротуары, дома и все на новый лад». Չացկին պատասխանում է.
„Дома новы, но предразсудки стары“. «Սաթարալայի» մեջ Յեսային և Մա-
սիսյանը խոսում են թիֆլիզի մասին, թե ինչպես նա փոխվել է և սկսել է
լուսավոր քաղաքների նմանել: «Այսպիսի էլ ժողովուրդ կըլինի աշխարհիս
յերեսին», նկատում է Մասիսյանը, «հազուսար նոր, շինությունները նոր,
իսկ հասկացողությունները էլի են է, էլի են»:

Վոր Սունդուկյանցը անձամբ ծանոթ է յեղել Սատրոփակու հետ և վա-
յել է նրա սերն ու հարգանքը, այդ այլևս կարծիք չէ, այլ փաստ, իրո-
ղություն: Հանգուցյալի թղթերի մեջ պահպանվել է „Русская Старина“
ամսագրի խմբագրության մի գրությունը Պետերբուրգից 1911 թվի հու-
նիսի 9-ին Սունդուկյանցին ուղղած, վորով նա հրավիրվում է գրել յուր
հիշողությունները Ա. Ն. Սատրոփակու, ևս և Գոգոլի, Դոստոյեվսկու և Շչեպ-
կինի մասին՝ ամսագրում տպագրելու համար:

„Русская Старина ամսագրի խմբագրությունը“, գրված է այդ հրավեր-
քի մեջ, «թախանձում է Չեղ ուղարկել իրան Չեր չափազանց շահեկան հի-
շողությունները Գոգոլի, Շչեպկինի, Դոստոյեվսկու և Սատրոփակու մասին,
նույնպես Ա. Ն. Սատրոփակու Չեղ գրած նամակները ամսագրում տպա-
գրելու համար:

Մաքրութիւնս բարձր և գնահատում Ձեր գրամատիքական քան-
քարի արտագրութիւնները, և նամանալանդ «Պեպո»-ն, «Քանդած Ոջախ»-ը
և «Ամուսիններ»-ը:

Այս հրավերքին Սունդուկյանցը նույն թվի հունիսի 21-ին ուղարկել
և Բորժոմից հետևյալ հետաքրքրական պատասխանը, վոր ավելորդ չենք
համարում այստեղ մեջ բերել, թարգմանելով այն ուսերենից:

«Ի պատասխան Ձեր հարգելի նամակին, վոր ստացել եմ թիֆլիզում
իմ այգտեղից հենց դուրս գալուցս առաջ», գրում և նա իր այդ պատաս-
խանում, «պատիվ եմ համարում հաղորդել Ձեզ, վոր յես բազդ եմ ունեցել
ծանոթանալ Ա. Ն. Ոստրովսկու հետ նրա թիֆլիզում յեղած որերում ին-
ժիներ Բախմեայի տանը, ճաշի ժամանակ. իմ ու նրա մեջ անմիջապես
սկսվեց մտերմական—բարեկամական գրույց գրականութեան, թատրոնի,
ժողովրդի լուսավորութեան գործի և այլ խնդիրների մասին: Դրանից հետո
շուտով կայացավ ի պատիվ նրա ներկայացում վրաց ազնվականութեան
թատրոնում վրացերեն լեզվով: Սաղում եյին Ա. Ն.-ի և իմ պիլեսները և
այլ ևս մի ուրիշ բան, վոր այժմ յես չեմ հիշում: Ա. Ն.-ը նստած եր բելի-
տաժի սթյակում, յես պարտերում: Ա. Ն.-ի պիլեսի ներկայացումից հետո
յես՝ նրան ուղղած ազմկալից ծափահարութեան միջոցին՝ շտապով վեր
բարձրացա, վոր սեղմեմ նրա թանկագին ձեռքը, վորը և կատարեցի հան-
գիպելով նրան նրբանցքում: Նա ինձ տարավ յուր սթյակը, ծանոթացրեց
յուր այնտեղ նստած յեղբոր, պետական կալվածների նախարարի, հետ և
նստեցրեց ինձ նրա կողքին: Նրանք յերկուսն էլ շատ սիրելի ու ուշադիր
վերաբերմունք ցույց տվին ինձ և մինչև ներկայացման վերջնալը այլ
յիփս չթողին, վոր յես դուրս գամ իրենց սթյակից:

Ա. Ն.-ը իմանալով, վոր յես ունիմ իմ Պեպո պիլեսիս ուսերեն ձե-
ռագիր թարգմանութեանը, յուր թիֆլիզից Մոսկվա մեկնելուց առաջ՝
առավ այն ինձանից, խոստանալով աչքի անցկացնել, շիտկել լեզուն, յեթե
հարկավոր լինի, և այնտեղ բեմագրել: Այդ մասին հիշված և և «Պեպո»-ի
Յուրի Վեսելովսկու ձեռքով 1896 թվին կատարված թարգմանութեան հա-
ռաջարանում:

Սակայն Ա. Ն.-ի ցանկութեանը չեր կարող իրագործված լինել նրա
հիվանդանալու և գրանից հետո շուտով վախճանելու (1886 թ. հունիսի
2) պատճառով ի մեծ ցով Ռուսաստանի բովանդակ մտավորականութեան:
Ա. Ն.-ի բարի վերաբերմունքը իմ անձի հանդեպ յես յերբեք չեմ մոռանալ:

Իսկ նամակներ, թերթերի հաղորդածի հակառակ, յես նրանից վոչ մի
անգամ չեմ ստացել: Թե նա ինչ կարողացավ անել իմ պիլեսի վերաբեր-
մամբ, չգիտեմ:

Ինչ վերաբերում և ականավոր Շչեպկինին, կարող եմ հաղորդել Ձեզ,
վոր յես նրան քանիցս տեսել եմ Ալեքսանդրյան թատրոնի բեմի վրա,
յերբ նա գալիս եր Մոսկվայից: Թեյեղ այն որերից գրա վրա անցել և 60
տարուց ավելի, բայց քանքարավոր խաղի սպավորութեանը մտքիցս չի
գնացել: Նամանավանդ լավ եմ հիշում, թե ինչպիսի ցայտուն յեղանակով
նա կատարում եր «Ревизор»-ի մեջ Գորդոնիչու վերջին յեղբափոփման մե-
նախոսութեանը:

Գորդոնիչու

Գորդի և Դոստոևսկու հետ, ցավ ի սիրա, յես բազդ չեմ ունեցել ան-
ձամբ ծանոթ լինել:

Ահա այն բոլոր դուզնաքյա հիշողութիւնները, վոր յես կարող եմ
Ձեզ հաղորդել, Մեծարգո Պավել Նիկոլայիվիչ»: (Воронов).

Թե վճիռ ուու կամ յերոպակուն գրողների ազդեցութեան և հատկապես
յենթարկված յեղել Սունդուկյանցը, և հատկապես ինչ կամ վճիռ գրվածք-
ներից և նա ազդվել, բացի Ոստրովսկուց, Գրիբոյեդովից ու Մուլլիերից,
վորի գրվածքներից «Ժորժ Դանդեն» նա թարգմանել և հայերեն, գժվար և
մի վորոշակի բան ասել: Պահպանվել և նրա մի նամակը, գրված Յուրի Վե-
սելովսկուն 1902 թ. նոյեմբերի 19-ին ի պատասխան նրա տված հարց-
մունքներին, վորի մեջ մենք կարդում ենք հանգուցյալի հետևյալ սեփա-
կան կարծիքը այդ մասին:

«Յես Ձեր հարցմունքներին», գրում և նա յուր այդ նամակում, «պա-
տասխանում եմ բաց սիրա, վոր ծնված ու կրթված լինելով Ռուսաստանում,
անցած լինելով ոուս գիմնազիոնի և համալսարանի դասնթացքները, լսած
լինելով ոուս ուսուցչապետներին, նամանավանդ գրականութեան ուսուց-
չապետ Նիկիտենկոյին չորս տարի շարունակ Պետերբուրգի համալսարա-
նում, յես բնականորեն պիտի գտնվեյի ոուս մտավոր կյանքի ազդեցու-
թեան ներքո: Բայց թե վճիռ ոուս հեղինակները ամենից ավելի յեն ազդել
իմ վրա և այդ հեղինակների վճիռ գրվածքները հատկապես սպավորու-
թեան են թողել, այժմ յես գժվարանում եմ վորոշել: Ինձ թվում և, վոր
յես քիչ թե շատ ամենքին էլ յերախտապարտ եմ իմ զարգացման համար,
ինչպես և շատ ստարագլի հեղինակների, վորոնց գրվածքները յես ման-
կութեանիցս կարգացել եմ Ֆրանսերեն լեզվով:

Ամենից ավելի յես ինձ յերախտապարտ եմ համարում նախ՝ իմ մորս,
վոր իր բարութեամբ և առողջ դատողութեամբ յուր ամբողջ կյանքի բն-
թացքում ղեկավարել և իմ գործողութեանները, և, յերկրորդ, իմ դաստիա-
րակներին—գիտնական Զրպետյանին և նրա կրթված Փարիզեցի Ֆրան-
սուհի կնոջը, վորոնց մոտ յես ֆեսցել եմ վեց տարի շարունակ առավոտ-
յան ժամը ութից մինչև յերեկոյան վեցը:

Մայրս և իմ մանկութեան դաստիարակներս արել են այն, վոր խեղ-
ճին, գրկյալին և կարոտյալին յես միշտ վերաբերվել եմ կարեկցութեամբ:
Յես, որինակ, յերբեք չեմ մոռանալ այն սասանիչ ներգործութեանը, վոր
յես զգացել եմ 30 տարի սրանից առաջ Վիկտոր Հյուգոյի «Dernier jour
d'un condamné»-ի Ֆրանսերեն բնագիրը կարդալու ժամանակ»:

Նրա յուր ժորժ Դանդենի թարգմանութեան մասին Հայոց Դրամա-
տիքական ընկերութեան 1906 թ. նոյեմբերի 24-ին ուղղած մի գրութեան
նից մենք իմանում ենք, վոր նա շատ հավանելիս և յեղել Մուլլիերի սրտ-
կերացրած տիպարներին, գրանց, այդ տիպարները, չհնացած և ժամանակա-
կից համարելով մեր կյանքին, թիֆլիզի բարբառն էլ հարմար Ֆրանսիացի
թատերագրի սուր յերգիծարանութեաններն արտահայտելու, վորով և հա-
րեանցորեն ցույց և ավել, վոր հիշյալ տիպարները առանց ազդեցութեան
չեն մնացել յուր վրա:

ԳՅ!

«Սրանից 28 տարի առաջ հայ դերասանական խումբը», գրում է նա հիշյալ թղթի մեջ, «անհետաձգելի պետք ունեցավ մի բեմական գրվածքի: Դիտեցին ինձ, և յես մի քանի որվա ընթացքում ստիպված եյի Ֆրանսերենից փոխադրել Մոլյերի «Փորձ Դանդեն» կատակերգությունը թիֆլիզի բարբառով, վոր և ներկայացրին 1878 թ. ապրիլի 27-ին, բարեգործական նպատակով: Փոխադրությունս կրում էր «Դանդան Գեկո» վերնագիրը:

Հասկանալի չե, վոր շտապ կատարված թարգմանությունը թերությունից զերծ չեր կարող լինել: Յես այդ զգում եյի, ուստի ներկայուս ազատ ժամանակ ունենալով, յես կարեոր համարեցի նորից թարգմանել անմահ թատերագրողի վերոհիշյալ յերկը, պահպանելով, վորքան ուժս ներում եր, Մոլյերի լեզվի և վոճի նրբությունները, հարժարեցնելով նրանց թիֆլիզի բարբառի վոգուճ: Ով վոր լավ ծանոթ է թիֆլիզի բարբառին, նա կը խոստովանվի, վոր այդ բարբառը մեծ հարժարություններ ունի Մոլյերի սուր յերգիծաբանությունները արտահայտելու, թեև նրան տեղ-տեղ պակասում են զարձվածներ և բառեր, վորոնց ստիպված եյի փոխ առնել զրական լեզվից: Այսպիսով սույն թարգմանությունը մեր բեմի համար հանդիսանում է, վորպես մի նորություն, թեև նրա ֆրանսերեն բնագիրը ներկայացված և յեղել 238 տարի առաջ: Մոլյերի պատկերացրած արվերը յերբեք չեն հնանում մեր կյանքի համար, մասնավանդ նրանք ավելի քան ժամանակակից են...»:

1888 թվին կատարվել է Սոււնդուկյանցի 25-ամյա գրական գործունեության հորելյանը, և հայ հասարակությունը շտապել և այդ առթիվ հայտնել նրան յուր հարգանքն ու յերախտագիտությունը ուղերձներով, շնորհավորական հեռագրներով և նամակներով և թիֆլիզում ու գավառներում նրա պիլանների բեմագրությամբ, զնահատելով նրա տաղանտը և մատուցած ծառայությունը հայ գրականության: Այդ առթիվ, ի միջի այլոց, Գամառ-Քաթիպան ուղարկել է նրան մի վեցտողանի վոտանավոր—ուղերձ, վորի մեջ արել է հորելյարի հետեյալ ընտրոշ ու շատ ճիշտ ու կտրուկ գնահատությունը—

«Ազգի շարավոտ վերքը լվանալ,
Լիրը մեծատունին անվախ աստակել,
Գոհարներով ծածկված կեղտերը բանալ,
Կեղծավորության դիմակը պոկել,
Ու խեղճ կինտոյին զընել մարդու շար,
Այս ամենը զորեց միայն քո հանձար»:

Այս վոտանավորի ինքնաձեռագիր բնագիրը պահված է Սոււնդուկյանցի թղթերի մեջ ու կրում է «Գաբրիել Սոււնդուկյանցի Պատկերի առաջ Դեկ. 23, 1888 թ.» խորագիրը, ինչպես պահպանված են նրա մյուս յերկու նրան նվիրած վոտանավորների ինքնաձեռագիր բնագրերը—«Արզրումի սոխակ»-ը «Իմ անմահ Գաբրիել Սոււնդուկյանցին բարեկամական ընծա», ընծայականով և «Մեր որերու հայ բանաստեղծ», «Նվեր անժողաց բարեկամության Պր. Սոււնդուկյանցին. 1887 թ. Տաքջուր» ընծայականով:

Ռափայել Պատկանյանցի սիրո և անժողաց բարեկամության առհավատչյա պետք և համարել և այն 40 ինքնաձեռագիր վոտանավոր պարունակող տետրակը, վոր նա ուղարկել է նրան, ևս և 27 մտերմական և շատ զնահատելի նամակները, վոր նա գրել է նրան, վորոնք բոլորն էլ պահված են նրա թղթերի մեջ: Պահպանված է և Պատկանյանցի այն հեռագրերը, վոր նա ուղարկել է թիֆլիզի հայ թատրոնական գործի ղեկավար Իշխան Ամատունուն 1890 թվի հունվարի 29-ին «Ամուսինների» ներկայացման առթիվ, վորի մեջ նա յուր հիվանդագին վիճակում գրել է՝ «Իշխան, յեթե հակառերնական բան չի լինիլ, խնդրում եմ և լիազորում եմ Ձեզ, վոր Դուք ուժ հետ հարկն և խորհրդակցելուց հետո, «Ամուսինների» ներկայացման որը իմ անունից, քանի վոր յես հիվանդ պառկած եմ անկողնում, գափնեպսակ դնեք մեր հանձարեղ թատերագիր Սոււնդուկյանցի գլխին և պակաս վորված բանաստեղծի լուսանկարը ուղարկեք ինձ ի հիշատակ»:

Դույն 1888 թ. լրացել է և նրա ամուսնության 25 ամյակը—սրժաթյա պսակը, վորի առթիվ նա յուր «Ամուսիններ» պիլեսը նվիրել է յուր կնոջը, տիկին Սոփիա Սոււնդուկյանցին և զբան կցել է մի «Ձոն», գրված 1888 թ. հունիսի 16-ին, վորից յերևում է, վոր տիկին Սոփիան, վորի որրորդական ազգանունը յեղել է «Միրիմանյան», յեղել է նրա համար վոշ միայն պարզ սիրող, խնամող և հավատարիմ կին, այլ և մտերիմ ընկեր ու բարի խորհրդատու, մասնակից նրա բոլոր գործերին ու խորհուրդներին և, վոր գլխավորն է, նա յեղել է նրան ոգնական և նրա գրական գործերում յուր «խելացի խորհուրդներով, նուրբ ճաշակով ու սուր ակնարկներով»: Դրան պետք է վերագրել այն քնքույշ սիրո և յերախտագիտության արտահայտությունը, վոր նա յերևան է հանել ամեն անգամ, յերբ առիթ է յեղել հիշել յուր կնոջը, զբա հետեվանքով է, վոր նա, ի արիտուր այդ որրի, ուրիշ ավելի թանկագին բան չի գտել, բայց թե զարգարել նրա անվամբ յուր այդ ժամանակների մտքի ծնունդ «Ամուսինների» ճակատը:



1901 թ. ապրիլի 30-ին լրացել է «Պեպոյ»-ի առաջին ներկայացման 30-ամյակը, վորի առթիվ նույնպիսի հանդեսներ ու ներկայացումներ են կազմվել, նույնպիսի շնորհավորական հեռագրներ ու նամակներ են ուղարկվել և ուղերձներ ու ձոներ մատուցվել նրան, ինչպիսին 25-ամյակի առթիվ: Արժանի չե ուշադրության Գեվորգ Չմշկյանի այդ առթիվ կազմակերպած Պեպոյի հանդիսավոր ներկայացումը Արախատիքական ընկերության թատրոնում յերկուշաբթի, ապրիլի 30-ին, 1901 թ.: Պահպանված Սոււնդուկյանցի պատկերով աֆիշից յերևում է, վոր առաջին ներկայացման մասնակցած դերասաններից չորսը՝ Միրզոգա Ամերիկյանը, Քազուհին, Միրազյանը և Տեր—Ասատուրյանը արդեն վախճանած են յեղել և դերերը մնացածների և նորերի մեջ բաժանվել են հետեյալ կարգով՝

- | | |
|--------------------|-----------------|
| Արուսիին | Գ. Միրազյան |
| Եփեմիա | Տ. Սաթ. Չմշկյան |
| Շուշան | Որ. Վարդուհի |
| Գիքո | Գ. Տեր-Գավթյան |
| Կակուլի | Ա. Մանգինյան |
| Գիգուլի | Պ. Միրզոյան |
| Սամսոն | Պ. Մամիկոնյան |

16036
51923615

Կարգադրում

Կարգադրում



Սունդուկյանցի թե գրական գործունեութեան 25-ամյակին, և թե Պեպոյի 30-ամյակին ստացված բազմաթիվ ուղերձներից ամենակարևորը յուր բովանդակութեամբ, յուր անկեղծ, սրտից բխած արտահայտութեաններով, մտքերի խորութեամբ ու թատերագրի տաղանաբանութեամբ և նրա կատարած գերի գնահատականը տալու հանգամանքով պետք է համարել վրաց թատրոնի հայտնի հին գործիչ, Պեպո-ի Գիքոյի գերը կատարող, կոնստանտին Գիմարովիչ Ղիպիանիի ինքնաձեռագիր շնորհավորանքը, յուր և վրաց գերասանական խմբի անունից, գրված թիֆլիզում 1901 թ. ապրիլի 29-ին. ավելորդ չենք համարում քաղվածորեն մեջբերել նրան այստեղ, թարգմանելով այն ոտուերեն բնագրից—

«Թանկագին Գալբիլի Նիկիտիչ՝

Վրաց թատրոնի պատմութեանը յուր կյանքում աղբիլ և յերկու միմիանցից խիստ տարբերվող շրջան: Առաջինը վերաբերում է 1850 թգականներին անմոտայ Իշխան Գեորգի երիտասարդի հասարակութեան մեջ հանդես գալուն, վոր վրաց թատրոնի հիմք է գրել և ավել նրա հոռաջխաղացման համար յուր զբաղման քական գործերը, մյուս գույնպիսի գործիչ Զուրաբ Անտոնովի հետ միասին, վորոնց պիլեսներով միայն նույն ժամանակները պահպանում էր իր գոյութեանը վրաց թատրոնը:

Իրանից հետո տիրում է լուսթյուն. այլ և այլ պատճառներով վրաց ժշտական թատրոնը փակվում է, և վոչ վոքի չինայող անողոք ժամանակը կորցում է այդ անհատներին հասարակաց ասպարեղից և վրաց թատրոնը քնի մեջ և ընկնում 25 տարի շարունակ, և լուսում են նրա գործիչները:

Հանդես էք գալիս Դուք,— և վրաց թատրոնի համար վրա յեն հասնում ուրիշ ժամանակներ, նոր կյանք է սկսվում, սթափվելով 20-ամյա մահաքնից—յերևան է գալիս վերածնունդը:

Յուր այգպիսի վերածնունդով մեր թատրոնը ամբողջպես յերախտապարտ է Ձեզ, վորովհետև Դուք էյիք, վոր Ձեր զբաղման քական յերկերով նոր կյանք ներշնչեցիք և հնար ու միջոց ավիք թատրոնիս ընդարձացած զարկերակին նոր ուժերով ազրերանալու:

Դուք բարձր պահելով գեղարվեստի զրոշակը, նրա սոստիյունի ու շուքի տակ ավիք մեզ վեհ գեղարվեստական գործեր, բարձր գեղարվեստի յերկեր: Դուք թատերագիր չեք. այլ բանաստեղծ, վոր գրել է վոչ հանդերով և վոչ վոտանավորով, այլ մեր կենդանի խոսքով:

Ձեր գուրս բերած տիպարներին մենք ամենքս էլ ամեն քայլափոխում հանդիպել ենք մեր կյանքի ճանապարհին, հանդիպում ենք նրանց այժմ և այս բոպիլիս, բայց մեղանից և վոչ վոք և վոչ մի ուշադրութեան չեք զարձրել նրանց վրա, մինչև վոր Դուք Ձեր զբաղմանքում և կատակերգութեաններում չը մարմնացրիք նրանց և մինչև վոր զբանով բաց չարիք մեր աչքերը մեզ շրջապատող միջավայրի վրա: Դուք Ձեր հարցասեր մտքով նշմարեցիք մեր առորյա կյանքում աչքի ընկնող տիպարներ ու վերաբողբեցիք արվեստի մեջ: Դուք ընտրանքով հավաքելով մեր կյանքի առկայծումները, գտաք մարդկային կյանքի աղչեցուցիչ յերևութիւններ և յերբ այգպիսի կամքի մարմնացումը հղացավ Ձեր հոգին, Դուք յուրացրիք այդ

Գալբիլի

կամքը, զարձրիք Ձեր հոգեվոր սեփականութեանը և արվեստի համար նյութ նախապատրաստեցիք, —այդ պատճառով է, վոր Ձեր յերկերում պայծառորեն փայլում է խորին իմաստը:

Դուք Ձեր այգպիսի ընդունակութեաններով կենդանացրիք հասարակութեանը. և Ձեր որինակին հետևելով է, վոր այժմ յերևան են յեկել մեզանում թատերագրերի, ինքնուրույն հեղինակների, թարգմանների, փոխադրողների, կոմպիլյատորների մի ամբողջ շարք, ու այգպիսով Դուք ուժեղ զարկ ավիք հոռաջխաղմելու և մեր գրականութեան...

Յեթե մեր կյանքի անցքերը գրավել են Ձեր հարցասեր ուշադրութեանը և առաջ են բերել Ձեր մեջ համակրանք,—այգպիսի համակրանքի աղբյուրը պետք է վորոնել Ձեր արտահայտած մտքերի մեջ, Ձեր պիլեսներում: Իսկ վորպեսպի Ձեր հեղինակապատկան գեղարվեստական բնագրը արձագանք գտներ մեր մեջ. մենք պետք է անցնեյինք նույն ճանապարհով, վոր Դուք էք անցել. մենք պետք է անձամբ մեր վրա վորձեյինք այն բոլոր տպավորութեանները, վոր Դուք էյիք քաղել Ձեր արած գիտողութեաններից մեր կյանքի վերաբերմամբ և արտահայտել Ձեր պիլեսներում: Այդ գեղքում միայն Ձեր մայրենի թատրոնի գերասաններն վերաստեղծելով արվեստագետի գաղափարը, կարող էյին հանդիսանալ, իրրև յերկերի նոր ստեղծագործող, և գերասանները, պետք է ասել ի պատիվ նրանց, լիովին հասել են այդ գեվոր նպատակին, Ձեր տիպարները այնպես գուրս բերելով, վոր նրանցից ամեն մեկը հանդիսանում է իրրև մի լիակատար ավարտված քաղված պատկեր: Վոչ բոլոր մահկանացուներին է վիճակված լինում ոժաված լինելու այգպիսի ընդունակութեաններով, այդ պատճառով և մենք առաջ ենք քաշում Ձեզ մեր միջից, իրրև բարձր տաղանտի տեր մի միավոր:

Այն, Դուք բանաստեղծ էք, վորովհետև մեր առորյա գորշ ու նյութական շահերով տարված կյանքից գուրս էք կորցել տիպարներ, վորոնք չեն մեռնիլ մեր մեջ, վորոնց Դուք անմահացրել էք: Միթե կարելի յե մոռանալ Ձեր Չամբախովին, Ոսեփին, Զիմգիմովին, Պեպոյին, Կակուլուն, Գիքոյին, Եփեմիային, Ոսկան Պետրովիչին, Յեսայուն, Գեորգ Մասիսյանին, Աբել Մաստակյանին, Մարգարտին ու շատ ուրիշներին...

Յե, վորպես վրաց թատրոնի գործիչներից ամենահինը, էլ ավելի բերկրանքով վողջունում եմ Ձեզ այսորվա հանդիսին, վորովհետև մենք, մայրենի թատրոնի գործիչներս, սնվել ու մեծացել ենք Ձեր պիլեսներով. մենք ուսել ենք արվեստը Ձեր պիլեսների վրա, մենք վոգեվորվել ենք Ձեր յերկերով և այգպիսով Ձեր աշակերանները լինելով, հրճվանքով շնորհավորում ենք Ձեր այսորվա հորելյանը, քանի վոր վոչ ամենքիս է վիճակվում հետագա սերնդի այգպիսի յերախտագիտութեանը, ինչպես Ձեզ և այլն:

1911 թ. ոգոստոսի 14-ին Բորժումում Սունդուկյանցը գրել է յուր հայտնի կտակը «Իմ մահն ու թաղումը» խորագրով և «Գալբիլի— Համալ» ստորագրութեամբ և մի յերկտող նամակով, վոր կտակի բնագրի հետ պահպանվել է նրա թղթերի մեջ, ուղարկել է «Մշակի» խմբագրութեան, խնդ-

րելով, վոր այն տպագրվի անմիջապես յուր մասինց հետո, և թույլ տալով մյուս թերթերին յեվս արտատպելու այն, յեթե կամենան:

Դրա, այդ կտակի մեջ, նա հաստատել և իր վերջին կամքն ու ցանկությունները՝ հուղարկավորվելու Պեպոնների ձեռքով և թաղվելու պարզորեն մի քանանայի և նրա ոգնական մի ախրացուի հոգեվոր արարողությամբ. մահարձան չտրվի իր վրա, այլ մի սե քար, իսկ հուշարձան դնելու հանդամանքի առաջ գալու ղեպքում ցանկություն և հայտնել, վոր արձանը զրվի վոչ իրան, այլ Պեպոյին, և այդ վորտեղ վոր հարմար համարվի:

Այդպիսի հուշարձանը պիտի ներկայացնե Պեպոյին կանգնած, զգալի ծածկած, մեկ ձեռքին Արութին Զիմզիմովի «Բարսթը», մյուս ձեռքն էլ Բարսթի վրա գրածը Արութինին ցույց տալու ձևով, Արութինին, վոր զլխարաց ու սերթուկով սեվերես կանգնած պիտի լինի նրա կշտին:

Հուշարձանի պատվանդանի վրա փորագրված պիտի լինի «Պեպո» և նրա «Են քո կոտորած ձեռքով չիս գրի» խոսքերը, և վոչ մի տեղ հիշված չպիտի լինի յուր, Սուսուկյանցի, անունը:

Կտակը արժանի յե ուշադրության իր ամբողջ բովանդակությամբ, մայց հատկապես ուշադրության արժանի յին նրա մնաս բարովները, վորոնց մեջ կան և հետևյալ յերկուսը «Մնաք բարով, սիրելի մարդիք, ինչ ասկի, ցիզի ու հավտի էլ ըլիք» և «Մնաս բարով, իմ սիրելի և պաշտելի ասկ, Աստուծ վաթանիդ արժանի անե»:

Սուսուկյանցը վախճանվել է 1912 թվին, ուրբաթ, մարտի 16-ին, յերեկոյան ժամը 10-ին, յուր 87 տարեկան հասակում: Ավագ Հինգշարթի մարտի 22-ին կատարվել և նրա հուղարկավորությունը ու թաղումը Վանքի յեկեղեցու գավթում, վորտեղ նրա կողքին թաղվել և հետո և նրա կինը Սոփիան: Նրա բաց գերեզմանի առաջ դամբանականներ են խոսվել, վորոնցից հուղարկավորողների առանձին ուշադրությանն և արժանացել Մտակար Զմշկյանի Թիֆլիսի բարբառով գրած վոտանավոր—դամբանականը, վոր կրում է «Ազիզ Գարբիելի հիշատակին» խորագիրը—

«Ո՛վ դուն ստեղծագործ, մի բուն քաղկցի,
Հալալ Պեպոյին ստեղծող մինձ վարպիտ,
Ազիզ Գարբիել, անմահ հայ—Դատա,
Մագալու գրող, մի «Համալ» ազա և այլն:

Սուսուկյանցը վախճանվել է «Մերտիս կամ ձերության ախտ» կոչված հիվանդությունից (Старческий маразм): Յուր կյանքի վերջին տարիները, ինչպես յերևում է բժշկական վկայականից, նա այնքան թուլացած է յեղել, այնքան ուժասպառ յեղած, վոր ձեռքերը և վոտքերը յերկարացնելու ժամանակ դողացել են, նամանավանդ աջ ձեռքը, վորի հետեվանքով նա չի կարողացել առանց ուրիշի ոգնության հագնել և հանել շորերը, և վոր գլխավորն և, դժվարացել և գրել, վորովհետև գրելու ժամանակ տատերի փոխանակ ստացվում են յեղել մի շարք կետերի գծագրություն, վոր բնականապես դժվար ընթեռնել յե դարձրել նրա գիրը: Այդ է պատճառը, վոր նրա վերջին նամակներն ու թղթերը կամ մեքենագրվել են, կամ ուրիշները գրել, իսկ նա ստորագրել և միայն: Այնուամենայնիվ

նա իր «Իմ մահն ու թաղումը» հրատեղաի սեվագրությունները, յուր մտերիմներին գրելիքները մինչև վերջն էլ յուր ձեռքով և գրել:

Սուսուկյանցի մահվան առթիվ լույս են տեսել բոլոր թերթերում համառոտ կենսագրականներ, հիշողություններ և գնահատականներ նրա մասին, իսկ Տիգրան Նազարյանցի «Տարագի» հերթական բացառիկ համարը ամբողջապես նվիրվել և նրա հիշատակին: Դրա մեջ զուրս են յեկել նրա ընտանիքի և նրան վերաբերյալ բազմաթիվ լուսանկար պատկերներ հանդուցյալի մտերիմների հիշողություններով ու գնահատականներով, վորոնք թանկագին ու հարուստ նյութ են բովանդակում իրանց մեջ նրա կյանքի ու գրվածների մասին:

Արժանի յե այդտեղ ուշադրության Աշուղ Հազիրիի մի շատ համառոտ հիշողությունը, Հազիրիի, վոր 30 տարի դրանից առաջ իր յերաժշտական խմբով նվագել ու յերգել և հայց ու վրաց ներկայացումներին և հաճախ արժանացել Սուսուկյանցի ու Ակակի Մերթիթի գովասանքներին, վորոնք սովորություն են ունեցել ներկայացումների միջոցներին թեվանցուկ գրոսնել ու հաճախ գալ կանգնել խմբի մոտ, լսել յերգերը, և կեցցե—վաշաներով իրանց գոհությունը հայտնել:

Ավելորդ չենք համարում այստեղ մեջ բերել և Աշուղի «Պեպո»-յին յուր հիշողության հետ միասին նվիրած յերգը, վոր, իբրև ժողովրդի միջից դուրս յեկած հասարակ մարդու մաքի ու զգացմունքի ծնունդ, նույնպես արժանի պիտի համարվի ուշադրության—

Սուսուկյանցի բարի հիշատակ, Պեպո-Նան,
Հայոց ազգի վարդ—մանիշակ, Պեպո-Նան,
Հայրդ մեռավ, թողեց կտակ, Պեպո-Նան,
Վոր քեզ պահենք մաքուր, խստակ, Պեպո-Նան:

Դու քու ընկեր կակուլու հետ կաց սերով,
Ուրախ, զվարթ կյանք վարեցեք քեֆերով,
Գտակդ քեզ, դամբդ լիքը ձկներով,
Ղոնազ սիրե, չուտես մենակ, Պեպո-Նան:

Դու կյանքի մեջ ծանր լուծը տանողն ես,
Արդարության թշնամուն սպանողն ես,
Ուրացող հաստատ աչքի հանողն ես,
Զիմզիմովի սրտին գնդակ, Պեպո-Նան:

Հայրդ ասով, «Պեպոյիս լավ պահեցեք,
Մի աուն տվեք, գունե-դուռ չգցեք,
Դուան կողքին արձան կանգնեցրեք,
Գլխին զգակ, ձեռքին մուրհակ, Պեպո-Նան:

Արդեն պրծավ քո դոնե-դուռ ման գալը,
Վճռված է քո տանը քո մնալը,
Քեզ մեզ հանձնեց, ինքը գնաց Համալը,
Նրա պատվերին չենք հակառակ, Պեպո-Նան:

Դու յես մեր թատրոնի փառքն ու պարծանքը,
 կատարեցիր դու մեր սրտի բաղձանքը.
 Տեր Աստվածը յերկար անի քո կյանքը,
 Ժողովրդի հալալ դավակ, Պեպո-Չան:

«Տարազ»-ի վերոհիշյալ (ապրիլի 4, 1912 թ.) համարում լույս տեսած Սուենդուկյանցի բաղձաթիվ գանազան ժամանակների լուսանկարների շարքը չի մտել նրա մի շատ հաջող լուսանկարքը, վոր պահպանվել է թանգարանում նրա թղթերի մեջ: Դրան կցված է և մի վեցսողանի Թիֆլիզի բարբառով գրված վոտանավոր, վոր ավելորդ չենք համարում այստեղ մեջ բերել—

«Դուն, միը Գարբիել,
 Քիզ վունց ինք սիրելի.
 Դու ու Քու «Պեպոն»
 Վուն վուր լավ ձեբոն
 Կպիլիք միզի
 Ել պուկ չիք գալի»:

Սուենդուկյանցը շատ մտահոգված է յեղել յուր պիլանների, հատկապես Պեպոյի, ոտար բեմերի վրա ներկայացված տեսնելու մաքով: Այդ նպատակով նա պատրաստած է յեղել Պեպոյի այն սուսերեն թարգմանությունը, վոր Ոստրովսկին տարել է իր հետ Մոսկվա բեմադրելու նպատակով, բայց չէր հաջողել յուր վերահաս հիվանդության և վախճանելու պատճառով, և թարգմանությունը կորել էր. նրա ցանկությունը և Ազ. Ծատուրյանի աջակցությամբ հետագայում այն խնամքով վերստին թարգմանվել է վիսելովսկու ձեռքով և ապագրվել Մոսկվայում 1896 թվին:

Նույն նպատակով նա պատրաստել է Պեպոյի և այն ֆրանսերեն թարգմանությունը, վոր պահպանված է նրա թղթերի մեջ: Թե ռե՞ ձեռքով է կատարված այդ թարգմանությունը, մենք չգիտենք. մենք միայն կարող ենք ասել, վոր նա կամեցել է այդ ուղարկել Պարիզ և ներկայացնել ֆրանսիական բեմի վրա 78 թ. ցուցահանդեսի որերով, յերբ նա ինքն էլ գնացել է Պարիզ: Նրա թղթերի մեջ գտնվում է Թիֆլիզի ֆրանսիական հյուպատոսի նամակը, ուղղված հայանի ակադեմիկոս Վիկտորին Սարգուին (Victorien Sardou de l'Académie Française), վորից յերեվում է, վոր Սուենդուկյանցը ցանկացել է 1878 թ. ֆրանսիական ցուցահանդեսի որերով (l'Exposition Internationale) ներկայացված տեսնել յուր «Պեպո»-ն ֆրանսիական բեմի վրա, ուստի ձեռնարկել է պատրաստելու կամ պատրաստել տալու նրա ֆրանսերեն թարգմանությունը ու ուղարկելու այն Սարգուին, վոր նա թարգմանության լեզուն վերջնականապես շխակելուց հետո, աջակցի այդ գործի հաջողության, խոստանալով իր վրա անել զգեստների և սարք ու կարգի հաջողությունը:

Հյուպատոսը ինքն էլ համակարծիք է գտնվել Սուենդուկյանցին և անշահեկան չի համարել նրա այդպիսի ցանկություն իրագործումը, քանի վոր, նրա գրելով, ցուցահանդեսը միջազգային էր, հայկական խնդիրն էլ

այդ ժամանակները հրատարակի վրա յեր գրված, և Սուենդուկյանցի պիլաններն էլ, նամանավանդ «Պեպո»-ն, Թիֆլիզի մեջ, վոր հայ մտավորականությունը կենտրոնն էր, մեծ հարգ էլին վայելում: «Պեպո»-յի ֆրանսերեն թարգմանությունը հրատարակված է Թիֆլիզում «Le Caucase illustré» պատկերազարդ հանդեսի 1899—1900 թվի 2, 3, 4 համարներում, հանդեսի, վոր լույս էր տեսնում Մուրիեյի խմբագրությունը:

Այդ հրատարակության տակ գրված խմբագրության ծանոթությունից մենք իմանում ենք, վոր այդ թարգմանությունը կատարված է յուր Սուենդուկյանցի և մի վոնն Ստադլինի ձեռքով:— «Cette comédie, écrite en langue arménienne, ասված է այդ ծանոթության մեջ, a été traduite en français par l'auteur lui-même et M. Stadlin. Nous avons retouché le style, abrégé une foule de scènes et supprimé les termes et les phrases trop „couleur locale“. Telle quelle cette Comédie est une ébauche de moeurs populaires de Tiflis et c'est à titre que nous la publions» և այլն: Բայց թե այս այն թարգմանությունն է, վոր պահպանված է նրա թղթերի մեջ, կրկնում ենք, չենք կարող ասել, վորովհետև պահպանված թարգմանության տակ վոչ հեղինակի ստորագրություն կա, վոչ էլ նրա ձեռքով և գրված:

Մենք ասացինք, վոր Սուենդուկյանցը 1878 թվին գնացել է Պարիզ. նրա թղթերի մեջ պահպանված վավերականներից պարզվում է, վոր նա այդ ճանապարհորդությունը կատարել է յերեք նպատակով. նախ՝ վոր նա յուր մանկության որերից յուր դաստիարակչուհի ֆրանսուհուց այնքան շատ է լավ բաներ և լսած յեղել Պարիզի մասին, վոր սրտով կղած է յեղել Ֆրանսիայի մայրաքաղաքին և ջերմ ցանկություն և ունեցել այցելել այդ քաղաքը և աչքով տեսնել նրա հրաշալիքներն ու այն բոլոր տեղերը, վոր նա միայն պատմությամբ էր լսել և ապավորել իր սրտում. յերկրորդ՝ տեսնել դույն թվին օլդաեղ կազմակերպված միջազգային ցուցահանդեսը «L'Exposition Internationale» և յերրորդ՝ ցուցադրել յուր Պեպոն ֆրանսիական բեմի վրա, վորի համար նա Թիֆլիզի ֆրանսիական հյուպատոսի միջոցով գրագրություն էր սկսել ակադեմիկոս Սարգուի հետ:

Նա յուր առաջին յերկու նպատակին հասել էր լիակատարորեն և այնքան բավականություն ստացել, վոր յուր ասելով, «նրա կյանքի մեկը յերկու յե դառել»: Նրա յերրորդ նպատակը չի իրագործվել, վորովհետև Սարգուն, Ալեքսանդր Դյուման (վորդին) և մյուսները խորհուրդ չեն տվել, անհարմար համարելով Պեպոն ֆրանսիական բեմի համար և անհամապատասխան Պարիզի թատերասեր հասարակության ճաշակին և հասկացողության:

Հանգուցյալի թղթերի մեջ պահպանվել են նրա մի քանի նամակը, վոր նա գրել է ճանապարհից և Պարիզից յուր կնոջը: Դրանք, այդ նամակները, չափազանց հետաքրքրական են թե իրենց բովանդակությամբ, և թե գրելու ձևով ու լեզվով, թե նրանց մեջ արտահայտված զգացմունքներով, և թե ապավորություններով, վոր նա ստացել է յուր սիրած համաշխարային մեծ քաղաքում. դրանք կարող են շատ կարևոր նյութ մատակարարել մեզ

նրա բնավորութեամբ յայն համար: Ավելորդ չենք համարում այստեղ մեջ բերել նմուշի համար այդ նամակներից յերկուսը:

Փարիզ 1878 $\frac{\text{հուլիսի } 8}{\text{հունիսի } 26}$

Իմ անդին Սոնաջան

Երեզ առավուտեան հասա Փարիզ, են քաղաքը վոր յարսուն տարի երազումս տեսնում եյի:

Աճկով տեսնում իմ ես Փարիզը, մեջը ման իմ գալի, մեջը շունչ իմ քաշում:

Ամա տարիք ե հարկավոր Փարիզը թամամ տեսնիլու. երեզվան զեսը կյանքս մեկն երկու դառավ: Սահաթի վիցի կեսն եր (Չեր սահաթով $9\frac{1}{4}$) առավուտանը վուր դաղբած, լախած, անքուն, գլուխս վագոններու թխրխուցեմեն գնացած իրիք որվան առանց շուր ու չեքմա հանել մտա ես խելքի ու լուսավորութիւնի մայրաքաղաքը, ու սրա գորութենիմեն ես սհաթին շուրս հաքա, դուս գնացի ու սաղ որ ելի վուտիս վրա եյի: Տերը բարի տա Գարսոնին, Որբելուն ու Սանդամովին. մե նմուտ կշտե չին հեռացի: Դիչ վուր ասիմ յարսուն վերստ վուտով ման եկանք ու զարթնի ես Վանտամի կոլոնը զիվիր գնացինք. փանառը ձիոխս վիկալա ու ննգա առաջկը 177 վուտը ինչ հանաքնիրով ու ծիծաղնիրով զիվիրինք գնացի...

Ախ Գարրիել եսաի ել վուրտի զիվիր բերիլ միզ, կոսե... Բաս Փարիզումն ինչիք շինում, ասի... Ենչանց վուտչ Շան գելեզին անցկացանք ու Արկ դը Թրիոնֆի վրա, վուր 281 վուտն ունե լոթիանոց զիվիր գնացինք: Ես երկու բացրութիւնիմեն վուտչ Փարիզը տեսնում եի ու աճկիս չեի ալտում:

Ամա ես անձանոթ քաղկումը, վուրդի զիվի նուր ե ինձ համա, զիվ տեսած ու սիրտած ե թվում ինձ. երեխուց սիրտս ենեկն կըպած ե ելի ես քաղկին, վուր հենց գիտեմ եսաի եմ ծնե...

Երեխերանցը պաշ արա ու զիվունին հարց ու բարով

Պերչատկիտ № չիմ գիտի. գրե

Քու Գարրիել

Փարիզ 1878 $\frac{\text{հուլիսի } 21}{9}$

Առանց քեզ ինչ կոնիմ սոյրաթն ու սազը Սայաթ—Նովա

Առանց քիզ ինչ կոնիմ Փարիզը, Սոնաջան, իմ քաղցը, իմ նազ Սոնաջան: Քո ձեներ, երեխանց ձեներ վոր չիմ լուսւմ, Չեզ վուր չիմ տեսնում, զիվ քնթես գուս ե գալի...

Որն որվան վրա սիրտս ենեկն կուչ ե գալի, վուր յենց գիտիմ ես դուքած ու զարգարած զրախար ինձ համա զժուխի ի...

Եստու համա ել մտկումս զրի վուր եքուց յեա ելոր մնաս բարով պատ-

վական Փարիզ ասիմ, հիշեմ Աստված ու զամ քիզ ու մի բրեխանցը փաթթվիմ:

Ես զիրն ու իս մեկ մեկու առաջքը կուլի մե որով յլլու կարինք. .

Մարթու աճկը վունչինչը չի կշտացնի... քանի ետի եի, հայ Փարիզ ու Փարիզ. հիմի վուր ետտի իմ, հայ իմ Թիֆլիզ ու Թիֆլիզ...

Ինչ անիս եսնց ինք ստեղծած...

Քու վրա երկու նամակը իրիզուն ստացա ու ինչ ալատացնիլ կուզիս վուր խիստ ուրախացա. երեխանցը պաշ արա ու զիվունին հարց ու բարով:

Մե գուգա թագա խարարնիլ իմ բիրում. ել ով կուտնջացնե ինձ... մե գլուխ Սարակիլ կու դառնամ... Ես երկու որ ե, Գարսոն չե հեռացի ինձմեն... մեաի ման ինք գալի. . մեկ ել որը Tour de St-Jacques (ը) զիվիր գնացինք, (308 վուտն ունե), մտանք իժում Palais de Justice, St-Chapel, Notre Dame, Jardin de Luxembourg ու իժում յիս գնացի théâtre français մե տեսաի իմ տիտի, վուր ամութ ե ձիոխս գալամ վիկալունիմ յորես իտենք...

Մնաս բարով իմ սիրուն, փափուկ, նազ ու քաղցը Սոնաջան, Աստված արժանի անե ինձ քո տեսին:

ՔՈՒ ԳԱՐՐԻԵԼ

Սունգուկյանցի վերջին ինքնուրույն զրվածքը յեղել ե «Կաակը», կատակերգություն 4 արարվածով, վորի վրա նա աշխատել ե մինչև յուր կյանքի վերջին որերը ե պատրաստել տպագրության համար, ե Լ. Տոլստոյի «Կենդանի զիակ» պիյեսի մի հատվածի թարգմանությունը, վոր կատարած լինելով Տիգրան Նազարյանցի խնդիրքով, տպագրվել ե «Տարազի» 11 համարում:

Նրա վերջին տպագրած գիրքը յեղել ե «Համալի Մասլահաթները» (11 մասլահաթ), վորոնք հետզհետե տպագրվել են «Մշակում», իրրե ֆելյետոններ, ե հետո հավաքել ու լույս են ընծայել 1912 թվին առանձին զրքով, նվիրելով «Մշակի» խմբագրության նրա քառասունամյակի առթիվ: Նույն հավաքածվի հանգուցյալի թղթերի մեջ պահված սրբագրության թերթերի շապկից յերևում ե, վոր զրան պիտի կցված լիներ ե նրա «Վարինկի վեչերը» խորագրով զրվածքը, վոր տպագրված ե յեղել «Մշակի» 1877 թվի 1, 2, 5, 8, 11 ե 14 համարներում, բայց մեզ անհայտ պատճառով տպագրվածի մեջ չի յերևում, ինչպես ե չեն կցվել կամ չեն մտել հավաքածվի մեջ ե Արձագանքի 1882, 83 ե 1886 թվերի մեջ տպագրված հանգուցյալի «Հաղիղի Մասլահաթները» (5 Մասլահաթ):

Սունգուկյանցի թղթերի մեջ պահպանված են նրա պիյեսների հետեվյալ ձեռագրերը:

1. Պեպո, բնագիրը ե մի ուրիշ որինակ.
2. Մախլաս, կոմեդիա յերեք արարվածով, 1866 թ. նոյ. 28.
3. Ելի մեկ գոհ, զրամա հինգ արարվածով, Տիխոնու բարբառով, հեղինակած զերերը փոխադրված ներկա գրական լեզվի Մ. Դ. ից:
4. Նատո կամ Սեր ե Կապանք, վորը ըրգություն 2 արարվածով, 1909 թ.
5. Սեր ե Ազատություն, կատակերգություն 5 արարվածով:

- 6. Ոսկան Պետրովիչը են-կինքումը:
- 7. Խորտակված շղթա (Սեր և Կապանք), կատակերգութուն 4 արարվածով:
- 8. Կտակ (յերեք որինակ), կատակերգութուն յերկու արարվածով, նվիրված բարեգործական ընկերութեան, նրա 30-ամյակի առթիվ:
- 9. Յեւ ալլն կամ Նոր Գիողոնես, առաջին անգամ ներկայացված Թիֆլիզի քաղաքային թատրոնում 1869 թվին, մայիսի 2-ին:
- 10. Բաղնիսի Բողշա, կատակերգութուն:
- 11. Ամուսիններ, նվիրված Սոփիա Սունդուկյանին:
- 12. Ժորժ Դանդեն (Դանդան Գեվո, խայտառակված ամուսինը կամ մարթը), թարգմանութուն Մոլիերից: Առաջին անգամ ներկայացված և Վերսայլում 1668 թվին:

Բացի այս գրվածքներից, նրա թղթերի մեջ մենք գտնում ենք և մի քանի գրաբան ու Թիֆլիզի բարբառով գրված վոտանավորներ, վորոնք նրա ստորագրութունն են կրում և նրա ձեռքով են գրված, վորոնցից, և հատկապես բարբառով գրվածքներից, մի յերկու նմուշ ավելորդ չենք համարում գնել այստեղ—

Սիրեկանս ինձ ուստ եկավ,
Սալամ երիտ ծիծաղելով,
Քաղցրը աչքով մըտիկ արավ,
Սըրտիս ցավը փարատելով.
Եկավ մտաբա, ձեռքս բռնեց
Քեփիս ափալը հարցնելով,
Սիրաբա բըլավ, ել չը դիմցա,
Դանգաբըկեցս յես լացելով:
Ասի թե՛ քու սիրու կրակով
Սիրաբա երած ու խորված է,
Ուշկ ու միտիբա քիմեն տարած,
Խիլքըս մըթնած ու խառնած է.
Ման իմ դալի յանա յանա,
Կինքըս քու ճանփին մաշած է,
Եշխիդ շանգով, հուլի հանգով,
Հոգիս ջանեմես հանած է:
Խըղճաց յարբա, շիխքըս նընգավ,
Փաթըթվեցավ, դոշիս կըպավ,
Իր նազ ձենով ավատացրուց,
Վուր իմ սերը սիրաբ նընգավ,
Եշխի բանգով յես հարփեցա
Դրախտ ու դըփուխկ մտես ննգավ,
Չարթիմ, տեսիմ երազումս իմ.
Լացով ջիգարբա կրակ ննգավ:
29 հուլիսի 1867 թ.:
Գ. Սունդուկյանց:

Ախ, իմ սիրեկան, ինձմեն հեռացար,
Ի՞նչ գեթ արի քեզ, վոր ինձ ուրացար,
Վիրջը թե ետ եր, ել ուր մողկացար,
Քու սըրտի սերը ինձ ուր խոտացար:
Սուր եշխիդ նիտը սըրտիս խըփեցիր,
Քու սիրու կրակը ջանքս գըծեցիր
Սըրտիս յարերուն մըհլամ չըքսեցիր,
Երած ու խորված մըտեզ գեցիր:
Արի, սիրեկան, ինձ մե ոահմ արս,
Երեսզ մի շուռ տա, մեկ մըտիկ արա,
Խըղճա քու դուլին, մեկ անգամ արս,
Քու քաղցը ձինին ինձ արժան արս:
Թե աղաչանքս դուն չիս իմանա,
Ել եսնեց կինքին յես չիմ դիմանա,
Գըլուխըս կուսպանիմ, Աստուծ գիտենա
Կուլի քո սերը սըրտես վիրանա:

Սունդուկյանցը Թիֆլիզում ամենքից հարգված մարդ և յեղել թե հայ, թե վրացի և թե մյուս հասարակութունների մեջ: Նա հյուրասեր և յեղել, ընկերասեր և բարեկամասեր. մի անգամ նրա հետ ծանոթացողը, բարեկամացողը, վորտեղ էլ վոր այդ լիներ, այլևս չի ուզեցել կարել նրա հետ յուր հարաբերութունները, վորի հետևանքով և նա ստիպված և յեղել ունենալ ընդարձակ թղթակցութուն գանազան քաղաքներում և տեղերում հայերի և ոտարների մեջ: Դրա, այդ ընդարձակ թղթակցութեան, արգասիքը պետք է համարել նամակների այն ահապին կույտը, վոր պահպանվել է նրա թղթերի մեջ:

Այդ կույտի մեջ մենք գտնում ենք, ի միջի այլոց, և մի քանի հայտնի ֆրանսիացիների նամակներ—Վիկտոր Հյուգոյի, Ալեքսանդր Դյումայի (վորդու) և Ֆրեդերիկ Մակլերի:

Ավելորդ չենք համարում այստեղ մեջ բերել Դյումայի նամակը ազատ թարգմանութեամբ, վորի մեջ պարզված են այն պատճառները, վորոնք արգելք են հանդիսացել «Պեսո»-յի բեմադրելուն Պարիզում:

98, Avenue de Villiers à Paris

Պարոն.

Յես հենց վոր ստացա, կարգացի այն ձեռագիրը, վոր Դուք պատիվ եք արել ինձ ուղարկելու: Իմ վրա վաղուց ի վեր պարտք կար պատասխանել Ձեզ, և յես այդ արած կը լինեյի, յեթե ստիպողաբար բացակայած չլինեյի:

Յես չեմ կարծում, վոր այն տիպարը, վոր Դուք դուրս եք բերել, այն տեսակներից լինի, վոր կարողանա հաջողութուն ունենալ մեր ֆրանսիական բեմի վրա: Մեր հասարակութունը, յերբ աֆիշների վրա նկատում է մի ոտար ծագում ունեցող, ոտար վարք ու բարք նկարագրող պիես, այդպիսիներից միշտ սպասում է տարորինակութուններ: Ձեր պարզ և շատ բնական տիպարը այդ նրան չի տալ և առաջ կը գա հուսախաբութուն, և յես պետք է ասեմ, վոր այդպես կը լինի վոչ միայն հանդիսականների համար, այլ և թատրոնի տեսուչների, վորոնք ճանաչում են նրանց արամադրութունները, ուստի և չեն ուզենալ նրանց մատուցանել մի այնպիսի բան, վոր նրանք չեն պահանջում:

Սա մի փափուկ ու նուրբ կերակուր է, վոր կը լինի մեր Պարիզյան հանդիսականների զարգացած ախորժակի և բղացած քմքի համար անհամ ու անճաշակ—անա իմ կարծիքը: Բայց գուցե յես սխալվում եմ, և յես պատրաստ եմ, յեթե Դուք ցանկանում եք, ներկայացնել Ձեր պիեսը Պարիզի թատրոնների վարիչներից նրան, վորին դուք ցույց կը տաք ամեն տեսակ հանձնարարութուններով և բոլոր ազդեցութեամբս, վոր յես կարող եմ ունենալ: Սրա համար յես սպասում եմ միայն մի խոսք, հակառակ դեպքում յես հետ կուղարկեմ Ձեզ ձեռագիրը այն հասցեյով և ճանապարհով, վոր դուք ինձ կը հաղորդեք:

Ամենայն պատրաստակա՛նութեամբ ծոռայելու և ամենալավ համակրանքով մնում եմ՝

Ա. Դյումա

Հայտնի յե, վոր Սոււնդուկյանցը ունեցել և մի ոտարագգի աշակերտուհի, որիորդ Ալեքսանդրա Պորֆիրյեֆնա Լեպեշինսկայա ազգանունով, վորի հետ նա միայն նամակազրուեթյամբ և ծանոթացել և նամակներով ել սովորեցրել և նրան հայոց լեզուն, այն ել գրաբարը: Նրա թղթերի մեջ պահպանվել են այդ որիորդի մի քանի նամակները և լուսանկար պատկերները, վորոնք բոլորն ել վկայում են որիորդի այն հարգանքի և անկեղծ սիրո մասին, վոր նա տածել և Սոււնդուկյանցի հանդեպ: Պատկերներից մեկի հետևը, որինակի համար, գրված և հետևյալ ընծայականը. «Առ ի սրտէ սիրելի և յարգելի Գարբէլ Սոււնդուկեանցին ի յիշատակ անկեղծ բարեկամութեան և խորին համակրանքի 1885 թ. սեպտեմբեր 15. ГОРЬ-ГОРКИ»: Մյուսի վրա--«Միրելի, թանկագին Գարբէլ Սոււնդուկյանցին նրան սրտանց սիրող և հարգող Ա. Լեպեշինսկայայից»:

Յուր մասնավոր կյանքում Սոււնդուկյանցը յեղել և, ինչպես ասում են, մի «դարդիմանդ», «լոթի» լավ մտքով, սրտաբաց և անկեղծ մարդ և սիրել և յուր պես լոթիներին և յեղբայրություն և արել նրանց հետ: Թանգարանումս պահված և նրա «Քանդած ոջախի» մի տպագիր որինակը, նվիրված հայտնի Գեորգ Յեվանդուկյանին հետևյալ ընտրոջ ընծայականով—«Գիտողի ջան, իմ գրածներու բարեկամներինն «Քանդած ոջախիս» մինձ բարեկամը դուն իս: Կա եստի մե քանի տիղիր, վորն որ դուն ել են գրվածն հավնիլ իս ու հիմի ել սրտումդ գալիս և. լավ իմանաս, վոր հաջիւած ու սիրված խոսկերը իմն ել ստեմես և եկի:

Բաս ես պատի թավաղեն թող միր սրտիը ավելի կապե ու միր ախարութիը հաստատ պահե:

Բն լոթի ախպեր Գ. Սոււնդուկյանց:

18-²¹/₁₁ 83 թ.

Թանգարանում գտնվող «Մշակի» խմբագրության թղթերի մեջ պահված են Հովհաննես Տեր-Գրիգորյանի համառոտ հիշողությունները, վորից յերևում և, վոր Սոււնդուկյանցը հատկապես սիրել և իր մոտ հյուրերը ընդունել մտավոր դասից, վորոնց հետ նա սիրել և խոսել զանազան խնդիրների մասին, և կարգալ յուր գրվածները, թողնելով իր սիրելի կնոջը Սուփիային իրանց ազգականներին ընդունելու պարտականությունը:

Նույն հիշողություններից մենք իմանում ենք, վոր նա սովորություն և ունեցել ամառը վաղ վերկենալ, առավոտյան ժամը 4 ին, և ստոր ջրում լողանալուց հետո, սկսել պարապել, թեկադրելով իր գրվածները իր մտերիմներին: Ծաշել և նա ժամը 2-ին և հանգստացել մինչև 5-ը, և այդ հանգստությունը յեղել և վոչ թե քնելը, այլ յուր սիրած հեղինակների ընթերցանությունը—Շիլլերի, Մոլիերի, Շեքսպիրի, Սկրիբլի և մյուսների: Ժամը 5-ից նա դարձյալ պարապել և մինչև 11-ը, յերբ սովորություն և ունեցել վերջացնել իր պարապմունքը և քնել:

Տոն որերին նա սովորաբար այցելել և ժողովրդական հանդեսները ու գրոսանքները, հաճախ լինելով Լոսու-Մելիքյանի շքեղ այգում, Կրճանխի ճանապարհին, վորտեղ յուր բարեկամների՝ Գրիգոր Իզմիրյանի, Միքայել Տեր-Գրիգորյանի, Պետրոս Սիմոնյանի և մյուսների հետ նստելով պատըշ-

գամբում, լսել և ասիական յերաժշտության վարպետներին, նրանց յերգն ու խաղը, թառն ու ճիւղուրը, դուդուկն ու գուսնան, գահիրեն ու տիմպլիպիտոն, հանդիսատես լինելով համբարության վարպետներ որհնելու ծիսակատարության և այդպիսի ժողովրդական հանդեսներից քաղելով կամ ընդորինակելով յուր գրելիք պիեսների համար տիպարներ ու տեսարաններ: Նա ինքն ել ունեցել և յուր սեփական թառն ու ճիւղուրը, գահիրեն ու տիմպլիպիտոն, վորոնցից առաջին յերկուսը նա սովորած և յեղել հրմտությամբ նվագել: Այժմ նրա այդ յերաժշտական գործիքները ցուցադրված են Թանգարանում:

Թե վորքան նա հոգացել և յուր պիեսներում դուրս բերած տիպարների ու նրանց ճշտության, կյանքից, իրականությունից առած լինելու մասին, ցույց և տալիս այն գեպը, վոր պատահել և Յերևանում 1889 թ. մայիսի 17-ին:

Նա այդ թվին Յերևանում գտնվելով, Բագրադ Նավասարդյանի ընկերակցությամբ գնացել և Պողոս-Պետրոս յեկեղեցին, և յեկեղեցու գավթում Գայիանյան գպրոցի պատշգամբում տեսել և գպրոցի վարժուհիներից մեկին, որ, կատարին Աղամալյանին, գրույց անելիս յուր աշակերտուհիների հետ, վորոնք խուսն բազմությամբ շրջապատել էին նրան և ուշադրությամբ լսում նրա ասածները:

Նա այնքան հափշտակվում և այդ տեսարանով և այնքան նմանցնում վարժուհուն յուր «Ամուսինների» Հեղինեյին, վոր հորգորում և յուր ընկերոջը վողջունել անձանոթ որիորդին և գրանով իրենց հարգանքը հայտնել հայ գաղափարական վարժուհիներին, վորոնց հավաքական տիպարը նա դուրս եր բերել յուր պիեսի մեջ ի գեմս Հեղինեյի: Նա կամենում և անձամբ ներկայանալ որիորդին և աշակերտուհիներին և իր հրճվանքը արտահայտել նրանց, բայց հիվանդ լինելով, չի կարողանում յուր այդ ցանկությունը կատարել: Սակայն իր վարժուհուքը բացատրելու համար, նա Թիֆլիզից մի նամակ և գրում որիորդին, վորը իմանալով, թե ով և յեղել իրան վողջունողը, մի յերկտուն վոտանավոր և ձոնելի բայցեամսի վրա և ուղարկել նրան:

Նա յուր այդ նամակում մեջ բերելով յուր «Ամուսինների» Հեղինեյի խոսքերը—«Այնտեղ (ուսումնարանում) յես իմ դերի մեջ եմ, այնտեղ յես զգում եմ, թե արդարե յես գործ եմ կատարում, յես իմ պաշտոնի վսեմությունը դասատան մեջ եմ միայն հասկանում»... և այլն: (Տես 2-րդ արարված, տեսիլ Գ), ավելացնում և «Տեսնելով Ձեզ, որիորդ, սուրբ յեկեղեցու գավթում, ուսումնարանի պաշգամբի վերա, շրջապատված Ձեր աշակերտուհիներով, յես մտաբերեցի Հեղինեյիս և հանկարծ ասացի կողքիս նստած բարեկամիս —«Ահա հայոց վարժուհին յուր նվիրական պաշտոնում, զլուխ տանք այս որիորդին» և մենք Ձեզ վողջունեցինք, ստանալով Ձեր սիրալիք պատասխանը: Հավատացեք, որիորդ, վոր այն գեղեցիկ տեսարանը, վոր մեր աչքերին ներկայացրեց Սուրբ Պողոս-Պետրոսի յեկեղեցին, նրա գավթի մեջ Գայիանյան Որիորդաց ուսումնարանը Ձեզ և Ձեր աշակերտուհիների հետ միասին, անջնջելի գծերով փորագրվեցավ սրախ մեջ և յես այդ տե-

սարանը յերբեք չեմ մտածնալ, քանի վոր կենդանի յեմ»:

Ավելորդ չենք համարում այստեղ մեջ բերել և որիորդի Սունդուկ-
յանցին ձոնած յերկտուն վոտանավորը—

Քու վաստակներով-սուր ակնարկներով
Դարձել ևս մեծ մարդ, հայտնի յես հային.
Տվել ևս դու կյանք քեզ հատուկ գրչով
Անշունչ, անկենդան աղքատիկ բեմին:
Այն, մեծ մարդ ես: Չունիմ թանկագին
Ակունք կամ վոսկի, քեզ նվեր բերեմ.
Բայց ջերմ համակրանք և այն սրտագին
Դարշապարիդ տակ զնեկ վստահ եմ:

Հասարակաց գործունեության ասպարիզում թեև նա առաջնակարգ
գեր չի կատարել, բայց յուր ուժի և կարողության չափ գործակցել և ազ-
գային մարմիններին գրական, հրատարակչական, դպրոցական, բարեգործա-
կան և թատրոնական գործերում: Նա նամանավանդ և հատկապես սիրել և
ու յևուանդով գործակցել Հայոց Կովկասյան Բարեգործական և Դրամատի-
քական ընկերություններին, վորոնց գործադիր ու պատվավոր անդամն և
յեղել:

Յուր ուղղությամբ Սունդուկյանցը պատկանել և հայ հասարակու-
թյան ազգային ազատամիտ խավերին և աշխատակցել և «Մշակին», հա-
վանելով այն ուղղության, վոր բռնել էր այդ թերթը, սակայն նրա այդ
սերն ու աշխատակցությունը չպետք և հատկանալ այն նեղ կուսակցական
մտքով, վոր սովորաբար հասկացվել և այն ժամանակները, այլ լայն ընդ-
հանուր մտքով: Նա միշտ բարեկամ և միացել ու հարաբերություն և ունե-
ցել ամենքի հետ և յերբեք չի կաշկանդել իրան կուսակցական նեղ հայացք-
ներով. նրա անձնական մտերիմ բարեկամներն են յեղել և Գրիգոր Արծրունին,
և Պետրոս Սիմոնյանցը, և Արգար Հովհաննիսյանը. և Գեվորգ Յեվանդուլյա-
նը, և Բաղրատ Նավասարդյանը, և Հովհաննես Սպենդիարյանը և մյուս
տարբեր հայացքների և ուղղության տեր ազգային գործիչները: Նրա հա-
մար գոյություն չեն ունեցել «Մշակական», և «Նոր-Դարական» իրանց ա-
ռանձնահատուկ նեղ կուսակցական մտքով կիրառված հորջորջումները:

Թե ինչպես և հասկացել Սունդուկյանցը յուր ժամանակվա կուսակ-
ցությունների հանդամանքները, այդ պարզ յերևում և այն վիճարանու-
թյունից, վոր ծագել և նրա և «Մշակի» խմբագիր Գրիգոր Արծրունու մեջ
1892 թվին կաթողիկոսական ընտրության խնդրի առթիվ:

Արծրունին «Մշակի» 1892 թվի 25 համարում գեանդել էր մի նկա-
տողություն, վորի մեջ, հայտնելով, վոր «Մշակի» կուսակցության կաթողի-
կոսության թեկնածուների և թեմական պատգամավորների անուններն ար-
դեն հայտնի չեն, բայց հակառակ կուսակցությանը,—վոչ, նկատել էր,
վոր կողմնակի կերպով պարզվում և, վոր հակառակորդների թեմական պատ-
գամավորը Գ. Սունդուկյանցն և, և վոր այդ հանգամանքը պատիվ չի կա-
րող բերել մեր թատերադրողի պատկանելի հասակին, քանի վոր նա առաջ

պատկանելով «Մշակի» կուսակցության և այդ կուսակցության ձեռքով
ընտրված լինելով պատգամավոր Մոզնու յեկեղեցում, այժմ հանկարծ թո-
ղել և մեր կուսակցությունը, հրաժարվել և Պրիմյանի—Արխատակեսի թեկ-
նածությունից և միացել մեզ հակառակ կուսակցության հետ:

Սունդուկյանցին այնքան վիրավորել և այս նկատողությունը, վոր
նա գրել և մի հերքում և պահանջել որենքի հիմունքով գեանդել այդ «Մշա-
կի» հաջորդ 26 համարում, հերքում, վորի մեջ նա պարզորեն ասում և
վոր նախ՝ ինքը չի իմացել, թե ում ձեռքով և ընտրված պատգամավոր,
յերկրորդ՝ վոր յեթե ինքը ընտրված էլ լիներ «Մշակի» կուսակցության
ձեռքով, այդ դեռ չեր նշանակել, վոր ինքը պարտական և հպատակվել այդ
կուսակցության պարազլիսի բոլոր պահանջներին. յերրորդ՝ վոր յեթե ինքը
անգամ ընդհանրապես համակարծիք էլ յեղած լիներ մշակականների ծրագ-
րին, այդ դեռ չեր նշանակել, վոր իրավունք չունեիր մանրամասնություն-
ների մեջ շղթվել նրանից, և վոր ինքը անպայման Պրիմյանական և, բայց
վորոչ նկատառումներով անժամանակ և համարում Արխատակես յեպիսկո-
պոսի թեկնածությունը: Այդ յուր համոզմունքն և, և վոչ վոք չի կարող
բռնանալ նրա այդպիսի համոզմունքի վրա, անգամ յեթե յեկեղեցական
պատգամավորների ընտրության ժամանակ Մշակականներից մի քանիսը
ձայն տված լինեն իրան:

Սունդուկյանցը սիրել և յուր ազգը, աշխատել և նրա գրականության
ու վերածնության համար, բայց չի ասել ու մյուս ազգերին, և իր գրվածք-
ների մեջ արծարծել և ընդհանուր մարդկային սկզբունքներ ու գաղափար-
ներ, պաշտպան հանդիսանալով ճշնվածներին, կարոտյալներին, արգար
վաստակով ապրողներին թե անհատներ, թե դասակարգերի և թե առան-
ձին ազգերի վերաբերմամբ:

Յուր կտակի հավելվածում, վորի սկզբությունը պահպանված և նրա
թղթերի մեջ, յուր կարողությունը յուր ընտանիքի անդամների մեջ հավա-
սարապես բաժանելուց և «Պեպո»-ն Բարեգործական ընկերության նվիրե-
լուց հետո, նա, պատվիրում և յուր ժառանգներին. Սիրել միմիանց
և ժողովուրդը, վոր ազգի և կրոնի էլ պատկանելիս լինեն նրանք.—
«Любите друг друга и народ, какиих бы национальностей и вероисповеданий
они ни были»:

Սունդուկյանցը մեր մյուս հեղինակներն ու գրողներն համեմատու-
թյամբ մի խոշոր առավելություն և ունեցել. նա նյութականապես ապա-
հովված մարդ և յեղել. նա համարաբարնում սովորել և, իրեն կովկասյան սան
(Кавказский воспитанник) և յուր յերկարամյա անբիժ ծառայության ըն-
թացքում միշտ ստացել և վայելուչ սոճիկ—4420 ռ., և հավելում 1095 ռ.,
—ընդամենը 5515 ռ., իսկ պաշտոնից արձակվելուց հետո 2500 ռուբլի կեն-
սաթոշակ, վորով բնականապես նա կարող էր վայելուչ ապրուստ ունենալ
և մի բան էլ ինչպե՛ս ապագայի համար: Ասել և թե նա միշտ ազատ և յե-
ղել նյութականի հոգսերից և, շրջապատված լինելով սիրող ընտանիքով և
հատկապես սիրող ու խնամող կնոջ գուրգուրանքով, միջոց և ունեցել միշտ
խաղաղ և անվրդով ապրելու և յուր պաշտոնական պարապմունքից ազատ
ժամանակը բոլորամասն նվիրելու իր սիրած գրական պարապմունքներին,

մի հանգամանք, վորից զրկված են յեղել մեր մյուս հեղինակներից շատերը:

Այս այսպես լինելուց հետո, պետք էր և կարելի չէր նրա զրչից ակնկալել ավելի բեղմնավորություն, քան վոր իրոք նա արտադրել կամ ունեցել է: Նա յուր 56 տարվա գրական գործունեության ընթացքում ավել է միայն 10—12 թատերական զրվածք և ֆելյետոնների մի մի փոքրիկ ժողովածու, վոր բնականապես շատ քիչ է:

Արդ, ինչն և յեղել զրա պատճառը:

Գուցե հնարավոր լինի այդ մեկնել նրա քիչ ազատ ժամանակ ունենալու հանգամանքով և նրա սովորությամբ՝ յերկար ու բարակ տքնելու յուր աշխատանքների վրա, անզագար փոփոխելով, ուղղումներ մտցնելով յուր զրվածքների մեջ և նորից ու նորից արտադրելով:

Այդ բոլորը, ի հարկե, ճիշտ է, և անկասկած հապաղեցրել է նրա ստեղծագործական աշխատանքի թափը, բայց մեզ թվում է, վոր զրանք նրա զրչի բեղմնավորության պակասության գլխավոր պատճառները չեն: Մեր կարծիքով՝ զրա պատճառը պետք է վորոնել նրա ստեղծագործական ուժի շուտով թուլանալու ու սղաովելու մեջ. նրա զրիչը հատկապես թիֆլիզի կենցաղի բնորոշ կողմերը քրքրելով, ի վիճակի չի յեղել բազմազան մոտիվներ դուրս կորցնելու այդ կենցաղից և ման և յեկել, պատել և մոտիվների սահմանափակ շրջանում, ուստի և բնականապես սղաովելով կորզածը, այլևս չի գտել մի նոր իմաստալից մոտիվ, վոր կարողանար ստեղծագործության մի նոր բովանդակալից կառուցվածք առաջ բերել: Դրանով հենց մեր Սունդուկյանցը տարբերվել է բուն Ոսարովակուց, վորի տաղանտը նույն ասպարիզում, նոր մոտիվներ գտնելու և զրանց հիմունքով նոր հորինվածքներ ստեղծագործելու ասպարիզում, չափազանց զորեղ և յեղել, արտադրելով հետզհետե բազմաթիվ և բազմազան նոր յերկեր, մեկը մյուսից ավելի իմաստալից, ավելի բովանդակալից, ավելի գեղեցիկ և կենսական:

Սունդուկյանցի վերոհիշյալ նյությալի ասպանով վիճակին պետք է վերադրել և այն միտթարական հանգամանքը, վոր նա կարողացել է յուր խի կենդանության որերով յուր ձեռքով հրատարակել համարյա իր բոլոր յերկերը, և այն՝ մաքուր, փառավոր, լավ թղթի վրա, յուր ուղածի պես, յուր հսկողությամբ և յուր վերջնական սրբազրությամբ, մի հանգամանք, վոր նույնպես վիճակված չի յեղել մեր զրոզներից շատ-շատերին: Տպագրված են առանձին զրքերով նրա հետևյալ զրվածքները—

Դիչերվան սարբը խեր է, կատակերգություն մեկ արարվածով.

Խաթարալա, կատակերգություն չորս արարվածով.

Ոսկան Պետրովիչը են-կինքումը, կատակ. 1 արարվածով:

Յեղ այլն կամ Նոր Դիողենես, կատակերգ. յերկու արարվածով.

Ելի մեկ գոհ, կատակերգ. հինգ արարվածով.

Պեպո, կատակերգություն յերեք արարվածով.

Քանդած Ոջախ, կատակերգություն յերեք արարվածով.

Ամուսիններ, կատակերգություն չորս արարվածով.

Բաղնուսի Բողջա, կատակերգություն յերկու արարվածով.

Սեր և Ազատություն, կատակերգություն հինգ արարվածով.

ժորթ Դանդեն (Թարգ.), կատակերգություն յերեք արարվածով.

Համալի մասլահաթները, ֆելյետոններ:

Այս զրվածքներից միայն մեկը—«Ամուսիններ» պիչեսն է, վոր ամբողջապես զրված է գրական լեզվով, և «Ելի մեկ գոհ», վորի մեջ յերկու դեր—Անանինը և Միքայելինը—նույնպես զրված են գրական լեզվով. մնացյալ բոլորը ամբողջապես զրված են թիֆլիզի բարբառով, վորով Սունդուկյանցը և խոսելու և զրելու մեծ հմտություն և ունեցել, սովորած լինելով այն մանկությունից և կատարելագործված նրա գիտության մեջ յուր գրական գործունեության ընթացքում հետազայում:

Սակայն, վորքան վոր նա հմտություն և ցույց ավել բարբառի գիտության մեջ, նույն չափով հմտություն նա չի կարողացել ցուցադրել գրական լեզվի գիտության մեջ: Ով վոր ծայրի ծայր և քննական աչքով կարողացել է «Ամուսինները», նա համողված կըլինի, վոր նրա գրական լեզուն ազրատ է, և հայաշունչ վոճերով ու զարձվածքներով, և բառամթերքով, և հայ հոգուն հարազատ շարամանությամբ: Յեղ այդ շատ հասկանալի յե. այն ժամանակ, յիր բարբառը նրա ընտանեկան խոսակցության լեզուն է յեղել և նա այն յուր մոր կաթի հետ ծծել է յուր մեջ և մարմին ու արյուն և դարձրել, զրականը՝ ընդհակառակը, նա հետո յե սովորել յուր արդեն արբունքի հասակում, և այն էլ զրքերից ու զրական շրջաններից, առանց անմիջական շփումն ունենալու բուն հայ կենսորոններում ապրող ժողովրդի հետ և զրա հետևանքով առանց հնարավորություն ունենալու հայ լեզվի հարազատ տարբերով ճոխացնելու, հյութալից դարձնելու իր լեզուն: Այստեղ գեղ մենք չենք խոսում նրա լեզվի անկանոնության մասին, քերականական որենքների և կետադրական կանոնների գործածության թերության տեսակետից, վոր ամեն քայլափոխում աչքի յե դարնում նրա զրվածքներում:

Սունդուկյանցի զրվածքների լեզվական արժանավորությունը սակայն պետք է վորոնել ու գտնել վոչ նրա գրական լեզվի մեջ, այլ բարբառի մեջ, վոր նա իմացել է կատարելությամբ և վորի գանձերը նա խնամքով ու մեծ հմտությամբ հավաքել ու ամփոփել է յուր յերկերում ու ժառանգություն թողել յուր հետնորդներին: Ազագա ուսումնասիրողը կարող է ամենայն վստահությամբ դիմել նրա զրվածքներին, իր բառաձևակարգ ազրյուրի՝ թիֆլիզի բարբառը ուսումնասիրելու համար. նա իրոք կըզանի նրանց մեջ այն բոլոր ճոխությունները և նրբությունները, վորոնք հատուկ են այդ բարբառին:

Սունդուկյանցը իրական դպրոցի ուղղության տեր մարդ է յեղել. նա հոգեբան է յեղել և զեղարվեստագետ—ստեղծագործող և, իր բազալիսին, մարմնավորել է յուր ձիրքը մի շարք զեղարվեստական զրվածքների մեջ, վորով մի կողմից հարստացրել է մայրենի գրականությունը, կողմից էլ կանոնավորել է նախ և առաջ յուր հարկողները բաց արել հետնորդների առաջ հայ թատերագրության ասպարիզը:

